

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱԽՆԵՐ ԱՐՏԱՇԵՍԱՆՆԵՐ, ԱՐԾԱԿՈՒՆԻՆԵՐ ԶԱՐԳԱՑԱԾ ԱԻԱՏԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Ծար. «Բազմավէպ», 162 [2004] էջ 63-92)

ԲԱԺԻՆ Բ ԶԱՐԳԱՑԱԾ ԱԻԱՏԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՐԱՑԱՆ

ԳԼՈՒԽ Բ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԶԻՆԱՆՇԱԽՆՆԵՐԸ

1. ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐՈՒՄ

ԺԲ. դ. վերջում - ԺԳ. դ. սկզբին սելջուկ-քրդական ամիրայութիւններից ազատագրուած Հայկաստանի մեծ մասում հաստատուել էր հայկական իշխանութիւն Զաքարեան տոհմի գլխաւորութեամբ։ Վերականգնուել էր ԺԱ. դ. ընկած հայ պետականութիւնը թէկուզ իշխանութեան կարգավիճակով։ Զաքարեան իշխանութիւնը հայկական նախորդ պետութիւններից տարբերում էր նրանով, որ սկզբնական շրջանում ընդունում էր վրաց թագաւորների գերադասութիւնը։ Այդ հանգամանքը պայմանաւորուած է նրանով, որ Զաքարեանների գլխաւորած հայկական զօրամասերը (այդ թւում նրանց հրամանատարութեամբ կռուող միւս հայկական աւատապետական զօրքերը) կռուում էին ընդհանուր թչնամու դէմ վրաց բանակի հետ միասին։ Միաժամանակ

նրանք (Զաքարեանները) ԺԲ. դ. վերջին քառորդից սկսած, վը-
րաց արքունիքում վարում էին ամենաբարձր պաշտօնները, ստա-
նում էին այդ պաշտօնները վրաց թագաւորից (Գէորգի Գ., Թա-
մար թագուհի), այսինքն կատարում էին վերջինների հանդէպ զի-
նուորական-պաշտօնավարական տիպի ծառայութիւն:

Հայ պատմագիտութեան մէջ Զաքարեանների իշխանութիւ-
նը, ելնելով վերջին հանգամանքից, համարւում է ներքին կեան-
քի բոլոր հարցերում ինքնուրոյն, բայց քաղաքականապէս կա-
պուած վրաց թագաւորութեան հետ:

Սակայն նշուած հիմնախնդրի շուրջ վերջին շրջանում կա-
տարուած նոր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Զաքա-
րեաններին յաջողուել էր հիմնել Վրաստանից անկախ իշխանու-
թիւն, այն է՝ անկախ պետութիւն: Իրաւաբան Խ. Թորոսեանը
միանգամայն իրաւացիօրէն դիտողութիւն է անում, որ հայ (եւ
վրաց) պատմագրութեան մէջ Զաքարեանների իշխանութեան
կարգավիճակը ներկայումս որոշում է միանշանակ նրա պատ-
մութեան ամբողջ ժամանակաշրջանի համար: Այնինչ այն բաժան-
ւում է մի քանի ժամանակահատուածների եւ ենթաշրջանների:

Ժամանակահատուածներից գլխաւորներն են.

1. Զաքարեանները իրենց սկզբնական բնակութեան վայրում:
2. Զաքարեանները Տաշիր-Զորագետում (Կիւրիկեան թա-
գաւորների հպատակներ):

3. ԺԲ. դ. 10-20-ական թթ. վրաց թագաւոր Դաւիթ Բ.
Շինարարը վերացնում է Կիւրիկեան թագաւորութիւնը եւ նրա
տարածքը միացնում Վրաց թագաւորութեանը: (Իրականում
Կիւրիկեան թագաւորութիւնը նուաճել էին սելջուկները, իսկ
Դաւիթ Շինարարը խլել էր սելջուկներից եւ միացրել Վրաստա-
նին՝ Ռ. Մ.): Այս ժամանակուանից Զաքարեանները, դարձեալ
գտնուելով հայունիքում, յայտնուում են վրաց քաղաքական հա-
մակարդում: Ակաւում է որակապէս նոր ժամանակաշրջան, որը
բաժանւում է մի քանի փուլերի.

ա. Զաքարեանները վրաց թագաւորների հպատակներ մին-
չեւ 1180-ական թթ. կէսերը:

¹ Տե՛ս մանրամասն՝ Լ. ԲԱՐԱՁԵԱՆ, Հայատամի սոցիալ-տնտեսական եւ քա-
ղաքական պատմութիւնը ԺԳ-ԺԴ դդ., Երեւան, 1964, էջ 45: Աննշան տար-
բերութեամբ նոյն կերպ են գնահատում Զաքարեանների իշխանութիւնը
նաեւ միւս պատմաբանները. Հ. Մանանդեան եւ այլն:

բ. Զաքարեանների յաղթական կուլտների եւ հայրենիքի ազգատպութեան շրջանը: Նրանց ինքնուրոյնութիւնը իրաւական ձեւակերպում է ստանում 1185թ., Թամար թագուհին Սարգիս Զաքարեանին 1185-ին նշանակում է Հայվրացական գօրքի գերագոյն հրամանատար, միաժամանակ չնորհում նրան Լոռին որպէս «Սամթավրո եւ սամթավաղո» այն է ճանաչում է Լոռին առանձին քաղաքական միաւոր, վրաց պետութեան տարածքից դուրս, իսկ նրա կառավարչին՝ ինքնուրոյն տիրակալ²:

Այդ պահից էլ սկսում է Հայաստանի ինքնուրոյնութիւնը, որը գնալով աւելի է ընդարձակում: ԺԳ. դ. առաջին քառորդում, ինչպէս շատ իրաւացի նշում է հայ պատմագրութեան մէջ, Զաքարեանները երկրում ճանաչում էին թագաւոր:

Զաքարեանների իշխանութեան քաղաքական-իրաւական կարգավիճակը արտացոլում է ոչ միայն նրանց տիտղոսաւորման մէջ (որը արտացոլում է նրանց վարչական իրաւունքները, պաշտօնը), այլ նաև իշխանութեան արտաքին նշաններում, առաջին հերթին զինանշաններում: Մեր ուսումնասիրութեան առաջին մասում որոշել ենք Զաքարեանների տոհմական զինանշանը: Պարզեցինք, որ այդ զինանշանն էր յուշկապարիկի պատկեր (կենդանու մարմինը կնոջ գլխով): Յուշկապարիկի բարձրաքանդակներ տեղադրուած են Զաքարեանների կառուցած մի քանի վանքերում, ինչպէս նաև կան ձեռագրեր գրքերի մանրանկարներում (օր. Զառինի ժողովածուում, Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 1382), նրանցից մի քանիսը տրուած են մեր մենագրութեան առաջին մասում, նկ. 39, 40):

Այժմ անհրաժեշտ ենք համարում պարզաբանել քանդակների միջեւ եղած մի կարեւոր տարրերակիչ գիծ, որը արտացոլում է Զաքարեանների քաղաքական կարգավիճակը նրանց իշխանութեան տարբեր ժամանակահատուածներում:


Քանդակների տարրերակումը տալիս ենք ըստ առանձին վանքերի պատկերաքանդակների:

² ԽՈՍԴՈՎ. ԹՈՂՂՍԵԱՆ, «Թագավիրների պատմութիւնն ու գովարանութիւնը» որպէս Զաքարեան Հայաստանի եւ Զաքարեանների պատմութեան սկզբնադրիւր, բնագրի բարգմանութեամբ եւ մեկնարանութիւններով համերձ, Երևան, 1992, էջ 254-256, 286:

³ Տե՛ս Լ. ԲԱԲԱՑԵԱՆ, նշ. աշխատութիւնը, էջ 43-48; Հ. ՄԱՆԱՆԴԵԱՆ, «Երկեր», Հ. Գ., Երեւան, 1977, էջ 181: Նորագոյն ուսումնասիրութիւններից տե՛ս Պ. ԽԱՊԱՂԵԱՆ, Զաքարեաններն ու Անին, «Դրամագիտական հարցեր», կազմեց եւ հրատարակութեան համար պատրաստեց՝ ԲԺՇԿ Թորիս Թորանեան, Բէյրութ, 1966, էջ 36-43.


ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔ

Այստեղ գլխաւոր եկեղեցու (Ս. Աստուածածին) արեւելեան ճակատին տեղադրուած է մեծածաւալ քանդակաշար (երկու հատուածներից), որի կենտրոնական մասն է Զաքարեան եղբայրների (Զաքարէի եւ Իվանէի) կտիտորական բարձրագանդակը: Նրանից ձախ՝ Զաքարէի գինանշանն է՝ յուշկապարիկը: Կտիտորական քանդակի գլխին իշխանական գլխարկ է, իսկ յուշկապարիկը թագակիր է (նկ. 33, 33ա):



Նկ. 33

Հայաստանի անկախութիւնը
Խորհրդանշող յօրինուածք: Հառին



Նկ. 33ա

Զամարեան եղբայրների՝ Զաքարէի եւ
Իւանէի կտիտորական բանդակը: Հառին

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ


ա. Գաւիթ- այստեղ յուշկապարիկը գլխարկով է (նկ. 34):

բ. Գլխաւոր եկեղեցու բեմ: Բեմի յայտնի քանդակաշարում (վերին շաբք) երկու յուշկապարիկներ, իրենց դիրքով շատ նման Բագրատունիների եւ Կիլիկիայի թագաւոր Լեւոն Բ.ի դրամի զինանշան առիւծների դիրքին: Նրանց (յուշկապարիկների) միջև դրուած է շուշանի քանդակ (նկ. 35), որը նմանւում է Բագրա-




Նկ. 34

Խւանէ Զամարեանի զինանշանը: Մակարավանք, գաւիր



Նկ. 35

Զամարեանների տոհմական զինանշանը



Նկ. 35ա
Ծուշանը որպէս խորհրդանիշ պատկերներ

տունեաց զինանշանի մայր օրինակի չուշանին (նկ. 17)⁴ եւ կատարում է նոյն դերը՝ ընդգծում քանդակապատկերի զինանշան բնոյթը։ Այդ նոյն դերը միջնադարում չուշանի նշանը կատարում էր նաեւ միջազգային զինանշաններում։ Նշաններում օգտագործուում էին չուշանի պատկեր բնական տեսքով կամ ոճաւորուած⁵։ Մակարավանքում նրան տրուած է ոճաւորուած տեսք։

Ճատ յատկանշական է, որ բեմի յուշկապարիկների եւ Հառիծի կտիսորական բարձրաքանդակների (Զաքարեան եղբայրներ) գլխարկները նոյնաձեւ են։ Զոյդ յուշկապարիկները ունենալով Զաքարեան իշխանների գլխազգեստը չուշանի նշանի հետ պէտք է խորհրդանշչին տուեալ տոհմը, լինէին նրա զինանշանը։

ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔ


Այստեղ յուշկապարիկների զոյդը միացուած է մէկ գլխածածկով՝ թագաւորական թագով։ Սա մեր կարծիքով խորհրդանիշ է Զաքարեանների պետութեան, որը ձեռք է բերել անկախութիւն եւ որի կառավարիչը երկրում համարւում էր թագաւոր։ Այդ պատճառով, Ճառիճում յուշկապարիկը տեղադրուած է Զաքարէ ամիրապատարի պատկերի կողմից եւ ընդգծում է նրա

⁴ Տե՛ս Բազմավեպ 2004, էջ 67։

⁵ Հմմտ. նկ. 35ա. Վ. ՊՕԽԼԵԲԿԻՆ, նկ. 138։

առաւելութիւնը միւսի (հվանէ աթաբեկի)՝ նկատմամբ⁶: Այստեղ յուշկապարիկը թագակիր է, չնայած ինքը Զաքարէն իշխանական դլիսազգեստով է:

Իշխանութեան այս երկու նշանների հակասութիւնը միայն թուացող է: Այն շատ պարզ յատակեցւում եւ հարթում է, եթէ նկատի ունենանք Զաքարեան պետութեան կարգավիճակը Զաքարէի կեանքի վերջին տարիներին:



Նկ. 36

Զաքարեանների պետական զինանշանը: Նոր Վարագավանիք

Նա այնքան էր հզօրացել, որ ժողովուրդը (բնական է նրա հասարակական խաւերը՝ ազնուականութիւնը եւ աշխատաւոր խաւը) նրան համարում էր թագաւոր, այդպէս է յաճախ (մենակ կամ եղբօր հետ) յորջորջւում պաշտօնական գրութիւններում (արձանագրութիւններ), յիշատակարաններում եւ այլուր: Նա փաստօրէն չթագաղբուած թագաւոր էր, իսկ նրա պետութիւնը՝ «իշխանապատութիւն», այն է միպետութիւն, որը գլխաւորում էին իշխանները (երկու եղբայրները), այլ ոչ օծեալ թագաւորը: Այդ բացատրութեամբ, Զաքարեան եղբայրների գլխարկները մատնանշում են նրանց իշխանապետական կարգավիճակը, իսկ թագակիր յուշկապարիկը՝ Զաքարէի թագաւորական յաւակնութիւնները:

⁶ Ս. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Հայկական աշխարհիկ պատկերաբանդակը, էջ 106:

⁷ ԽՈՍՔՈՎ, ԹՈՐՈՍԵԱՆ, նշ. աշխատութիւնը, էջ 322:

Հնդ որում, եթէ Հառիճի թագակիր քանդակը Զաքարէի զինանշան է, ապա Մակարավանքի գաւթի յուշկապարիկը իշխանական գլխածածկով իվանէ աթաբեկի նշանն է: Մակարավանքի գլխաւոր եկեղեցու քանդակաշարում պատկերուած է զոյտ յուշկապարիկներ շուշանի նշանով՝ դա Զաքարեանների տոհմական նշանն է, իսկ նոր Վարագավանքի թագակիր երկմարմին յուշկապարիկը խորհրդանշում է պաշտօնապէս չթագաւորուած, բայց գործնականում երկրում թագաւոր ճանաչուած ղեկավարը (Զաքարէն): Դա Զաքարեան պետութեան ժԳ. առաջին քառորդի (մինչև մոնղոլական նուաճումը) զինանշանն է (նկ. 36):

Այսպիսով, Զաքարեանների զինանշանները իրենց տարբերակներով շատ պարզորոշ հաստատում են ի. թորոսեանի պատմա-իրաւագիտական վերլուծութեան հետեւութիւնները:

Մնում է մեկնաբանել Զաքարեանների եւս մէկ զինանշան: Սա տարբերում է միւսներից նրանով, որ մաս է կազմում աւելի բարդ կառոյց ունեցող պատկերաքանդակի: Խօսքը Գեղարդավանքում 1283 թ. Պոռշ Խաղբակեան իշխանի կառուցած ժայռափոր եկեղեցու (ժամատան) ներսում մեծադիր քանդակապատկերի մասին է:


Երկու ժայռափոր եկեղեցիների ընդհանուր մուտքի վերնամասում քանդակուած են մարդկանց՝ երկու իշխանաւորների զոյտ պատկերներ:

Չնայած նրանց գլուխները ունեն պսակներ, նրանք հոգեւորականներ չեն. պսակ դրւում էր նաեւ կտիտորական քանդակների վրայ (այդպէս է, օրինակ, Դմեղի Բարձրաքաշ վանքի կտիտորական քանդակում⁸): Յօրինուածքում համաշափութիւն ստեղծելու նպատակով մուտքից աջ պատրաստուած է խուլ խորշ, որը դռան տպաւորութիւն է թողնում: Խորշի վերնամասում քանդակուած են զոյտ յուշկապարիկներ, երկուսն էլ թագակիր: Նշուած երկու քանդակազոյգերի միջեւ քանդակուած է մեծ եւ երկարածիք խաչ, որի տակ տեղադրուած է մարդու շատ փոքր չափերի գլուխ (նկ. 36ա):

Սա սովորական մեծածաւալ զարդաքանդակ չէ: Աջ կողմի յուշկապարիկները Զաքարեանների զինանշաններն են, ձախ կողմի մի մարդկանց պատկերները տրամաբանորէն պէտք է լինեն Խաղբակեան տան ներկայացուցիչների քանդակները, որոնք Զա-

⁸ Ա. ՄԿԱ.ՑԱԿԱ.ՆԵԱ.Ն, Հայկական աշխարհիկ պատկերամանդակը, նկ. 54:

քարեանի հաւատարիմ հպատակներն էին: Նրանք գնել էին գեղարդավանքը Զաքարեաններից եւ շարունակել շինարարութիւնը: Նշուած քանդակապատկերը արտացոլում է մեր կարծիքով երկու տոհմերի համագործակցութիւնը, Գեղարդում կատարուող շինարարութեան կամ այլ բնագաւառներում:



Նկ. Յ6ա

Զաքարեանների զինանշան: Գեղարդ, ժայռափոր եկեղեցի

Ինչու Զաքարեանները որպէս խորհրդանիշ ընտրեցին յուշկապարիկի պատկերը, այլ ոչ աւելի տարածուած նշան (զիշատիչ կամ ընտանի կենդանու պատկեր), ինչպէս աւանդաբար տարածուած էր իրենց ժամանակաշրջաններում աւատապետական տոհմերի նշաններում: Այդ հարցին կը փորձենք պատասխանել ամփոփիչ մասում, իսկ այստեղ պէտք է նշել, որ յուշկապարիկի պատկերը որպէս զինանշան եղակի երեւոյթ էր Հայաստանում: Վաղ միջնադարում ազնուական նշաններում այն չի հանդիպում,


առաջին անգամ որպէս խորհրդանիշ երեւան է գալիս ԺԱ. դ. Յովհաննէս Սանդղկավանցու Արշարունիքի («Մողնու») Աւետարանի մանրանկարներից մէկում: Մանրանկարի կիսախորանը միւսների նման ունի կամարածեւ շրջանագիծ, բայց առանց զինանշանների: Կիսախորանի ներսում պատկերուած է «Նեղոսի տեսարանի» նոր տարբերակ, այդ տեսարանը ունի նաեւ Մլքէ թագուհու Աւետարանի մանրանկարը: Բայց նշուած երկու «Նեղոսի տեսարաններում» պատկերուած է ակները էապէս տարբերում են միմեանցից՝ թ. դ. օրինակում նկարուած են կոկորդիլուներ, ձկներ, բաղեր, փորահաւեր, նոյնիսկ կէտեր եւ ձկնորսներ նաւակի մէջ (նկ. 37): Այստեղ զինանշաններ չկան: Սանդղկավաննեցու մանրանկարում հեռացուած են բոլոր թուարկուած կենդանիները, թողնուած է միայն նաւակը եւ աւելացուած են բոլորովին նոր է ակներ՝ կենտրոնում (նաւակի տակ) յուշկապարիկի պատկեր գլխարկով, նրա երկու կողմերից գիշատիչ կենդանիներ (նկ. 38), որոնց մասին խօսք եղաւ վերը: Այս մանրանկարում յուշկապարիկը չի ներկայացնում որեւէ տոհմի զինանշան, այլ պարզապէս միւս երեւակայական գիշատիչների հետ ունի զուտ խորհրդաւոր իմաստ, ընդ որում կենդանիների խմբում նա զբաղեցնում է կենտրոնական տեղը:



Նկ. 37

«Նեղոսի տեսարան»: Մանրանկար Մլքէ բագուհու Աւետարանում

Խորանը նոյնպէս խորհրդապատկեր մանրանկար չէ, այս-
տեղ չկան սիւների պատուանդանի մօտ կանգնած կենդանիներ
կենաց կիսածառերով:



Նկ. 38

«Նեղոսի տեսարան»: Մանրանկար Արշարունիքի Աւետարանում
(Յովհաննես Սանդղավանեցի, ալրոմ, նկ. 28)

Յուշկապարիկի երկրորդ օրինակի մասին ասուեց վերը՝
մանրանկարում զոյտ յուշկապարիկները կանգնած են կիսախորա-
նի վրայ, կենաց հեղուկի անօթի երկու կողմերից: Մանրանկարը
արուած է ի պատիւ այն ազնուական տոհմի, որի զինանշանն էր

ցուլը (նկ. 31)⁹: Այս մանրանկարում յուշկապարիկները կատարում են լրացուցիչ էակների դեր, որոնք ամբողջացնում են յօրինուածքի իմաստը:

Սանդղկավանեցու Աւետարանում հանդիպող նշուած երկու օրինակ յուշկապարիկներից բացի թ-ժԱ. դդ. այլ յուշկապարիկներ պատկերագանդակներում կամ մանրանկարներում չեն հանդիպում:

Կարելի է եզրակացնել, որ ժ.-ժԱ. դդ. յուշկապարիկները սկսուեցին օգտագործուել որպէս որոշակի գաղափար արտայայտող պատկերներ, բայց այդ շրջանում դեռևս զինանշանի իմաստ չեն ունեցել: Միայն ժԳ. դ. սկզբին Զաքարեանները օգտագործեցին նրանց պատկերը որպէս տոհմական զինանշան, հաշուի առնելով այդ կենդանու հետ կապուած որոշակի պատկերացում-հաւատալիքները, նրանց վերագրուող խորհրդանիշ իմաստը:

2. ԽԱՂԲԱԿԵՍԱՆ-ՄԱՄԻԿՈՆԵՍԱՆ ՏՈՀՄԻ ՃԻՒՂԱԿՈՐՈՒՄԸ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐՈՒՄ

Զաքարեանների օրօք Հայաստանի ազդեցիկ աւատապետական տոհմերից էին Խաղբակեանները: Չնայած աղբիւրներում Խաղբակեան ազգանուան առաջին յիշատակումը վերաբերում է ժԲ. դ. վերջին («ազգ Խաղբակայ» կամ «Հաղբակայ»), այդ տոհմը գոյութիւն է ունեցել վաղ միջնադարում եւ դրանից էլ առաջ: ԺԳ. դ. նրա նշանաւոր ռազմական եւ քաղաքական գործիչներից էր Պոօշը, որի անունով Գարեգին Յովսէփեանի տոհմին նուիրուած ուսումնասիրութիւնում այն անուանում է Պոօշեան կամ Խաղբակեան (չնայած աղբիւրներում «Պոօշեան» ազգանուն չի յիշատակում): Պոօշը Վասակ իշխանի որդին էր, Խաղբակի թոռը: Վասակը 1201 թ. ընտանիքով Խաչչնից տեղափոխուել է Վայոց ձոր եւ այստեղ կոռուել սելջուկների դէմ: Պատերազմների աւարտից յետոյ Վասակ Խաղբակեանը հիմնել է իշխանութիւն Վայոց ձոր կենտրոնով, որը իվանէ Զաքարեանի հպատակ աւատապետական կազմաւորումներից էր: Իշխանութեան առաջ գալու պարագաները այն սպաւորութիւնն են ստեղծում, որ Խաղբակեանների իշխանութիւնը մէկն էր նորելուկ աւատապետական

⁹ Տե՛ս Բազմավեպ 2004, էջ 86.

տներից, որոնք առաջ էին եկել ԺԳ. դ. սկզբին Զաքարեանների օժանդակութեամբ:

Վայոց ձորում նրանց իշխանութիւնը ի հարկէ նորելուկներից էր, բայց տոհմը շատ հին էր. դա նոյն տոհմն է, որը կրում էր հանրայայտ Մամիկոնեան ազգանունը եւ որի մի ճիւղը (Բակ իշխան) հաստատուել էր Արցախում Աւարայրի ճակատամարտից յետոյ¹⁰: Դարեր անց Վասակ Խաղբակեանը (իմա՝ Մամիկոնեանը) հիմք է դրել տոհմի նոր իշխանութեանը Վայոց ձորում:

Մամիկոնեան եւ Խաղբակեան ազգանունների յաջորդականութեան մէջ կան որոշ անհասկանալի շեղումներ՝ Դ-Ը. դդ. Միջանառութեան մէջ էր Մամիկոնեան ճեւը (առանձին անհատների համար նաեւ թ.):

ԺԲ-ԺԳ. դդ. միայն Դսեղի իշխաններն են յիշտում Մամիկոնեան ազգանունով: Միւս կողմից վաղ միջնադարում Խաղբակեան ազգանունը յիշտակւում է «Գաճնամակի» ընդարձակ խմբագրութիւնում «Խաղբեանք» ձեւով (տե՛ս «Սովերք Հայկականք», Հտ. Զ, Վենետիկ, 1853, էջ 37. յայտնի են տոհմի ներկայացուցիչներ ԺԱ. դ.՝ Դէն Խաղբակեանը (Խաղբակի որդի Դէնը) Սիւնիքի Հաբանդ գաւառում, Թորոս Խաղբակի որդի՝ Մանդղավանքում: Նշանակում է գոյատեւել է նաեւ տոհմը, որի ազգանունը անհասկանալի պատճառներով աղբիւրներում չի յիշւում մինչեւ ԺԳ. դ.։

Գրաւոր աղբիւրների տուեալները, եւ մասնաւորապէս զիւնանշանները հաստատում են, որ Մամիկոնեաններն ու Խաղբակեանները նոյն տոհմի երկու գլխաւոր ճիւղաւորումներն են:

* * *

1240 թ. Պոօլ իշխանը Զաքարեաններից գնել է Գեղարդավանքը, նա կառուցումներ է կատարել վանքում, որոնցից ամենագլխաւորը Կաթողիկէ տաճարի հիւսիսային կողմից ժայռափոր եկեղեցին է (ունի արձանագրութիւն այդ մասին):

Եկեղեցու կամարների տակ, պատի վրայ քանդակուած է Խաղբակեանների տոհմական զինանշանը, որը եռանդամ է՝ յօդինուածքի վերեւում ցուլի գլուխ է, նրանից քիչ ներքեւ զոյգ ա-

¹⁰ Մանրամասն տե՛ս մեր յօդուածը՝ Պոօշեան ֆեռալական տոհմի ծագումնաբանութիւնը, ԳԱ. «Լրաբեր» հասարակական գիտութիւնների, 1986, N 11, էջ 69.

ոխւծներ, կապուած միմեանց հետ շղթայով, նրանցից ներքեւ, դրուած է ճանկող արծուի քանդակը (նկ. 39): Մենք դա համարել ենք տոհմի զինանշանի շքահանդէսային օրինակ, ամբողջական (եռանդամ) ձեւով՝ նա պատկերուած է միայն Գեղարդում, միւս յուշարձաններում կամ մանրանկարներում ներկայ է եռանդամներից որեւէ մէկը: Միայն մի յուշարձանի՝ Մարաթուս հին գիւղի միջնադարեան (ԺԴ. դ.) եկեղեցու քանդակում տեղադըրուած են բոլոր երեքը՝ ցուլ, մէկ առիւծ եւ ճանկող արծիւլ¹¹:




Նկ. 39

Խաղբակեանների տոհմական հաւամական զինանշան: Գեղարդ


Պէտք է նշել նաեւ մի հանդամանք որի վրայ սովորաբար ուշադրութիւն չի դարձւում Գլխաւոր եկեղեցու թմբուկը նոյնպէս ունի բարձրաքանդակներ, որոնք համարւում են զարդաքանդակներ, այնինչ քանդակուած են խաղբակեանների զինանշանի բաղադրիչները: Փաստօրէն կրկնուած է ժայռափոր եկեղեցու պատկերաքանդակի եռանդամ շարքը, բայց հորիզոնական դասաւորութեամբ: Թմբուկի կեղծ կամարներից մէկի ներսում ճանկող արծիւն է, նրանից աջ՝ եւս մէկ քանդած-թռչուն, իսկ կամարների հատուող անկիւններում ցուլի եւ առիւծների գլուխներ (նկ. 39ա):

¹¹ Տե՛ս Հայկական զինանշաններ, մաս I, նկ. 53:



Նկ. 39ա

Խաղբակեանների զինանշան Գևդարդի գլխաւոր եկեղեցու քմբուկի վրայ



Նկ. 40

Պոօշ Խաղբակեանի զինանշանը
(Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 4820, ԺԴ դ., էջ 104ա)

Արծուի հարեւան թռչունը քանդակուած է նաեւ Թանաղէ վանքի (Գլածոր) 1273-79 թթ. կառուցուած Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկին¹²: Սա անկասկած Խաղբակեանների հետ կապուած իշխանական տներից մէկի զինանշանն է:

Եթէ Խաղբակեանների զինանշանի Գեղարդի ամբողջական, շքահանդէսային օրինակը համադրենք տոհմի նշանների առանձին օրինակների հետ, որոնք ցրուած են տոհմի կառուցած առանձին յուշարձաններում կամ նկարուած են մանրանկարներում, ապա պարզում է, որ Գեղարդի ամբողջական օրինակը ընդգրկում է իր մէջ տոհմական նշանների երեք խումբ.

ա. Զոյդ առիւծների խումբը

Նրա քանդակի միակ օրինակը Գեղարդում է, բայց կան օրինակներ մանրանկարներում՝ Գլածորում 1218 թ. գրուած Աւետարանի երկու խորաններում¹³:

Երրորդ օրինակը՝ Ժ. դ. ձեռագրերից մէկում մանրանկարի, խորանի վերնամասում զոյդ առիւծների նկարն է (նկ. 40):

բ. ճանկող արծուի խումբը

Այս օրինակը բացի Գեղարդից հանդիպում է նաեւ շատ այլ յուշարձաններում:

Վայոց ձորում հին Գոմեր (այժմ՝ Վանքաձոր) գիւղի մատուռ- Թանաղէ վանք՝ Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկ, Յախաց քարի՝ Ս. Կարապետի եկեղեցի. Խոսրովի անտառում՝ Վանստան (այժմ՝ Իմիրզեկ) հնավայր: Անիում՝ այստեղ այդ նշանը քանդակուած է Պահլաւունիների Փրկչի եկեղեցու ճակատին եւ Տիգրան Հոնենցի եկեղեցու թմբուկում: Այն վկայում է, որ Ժ-Ժ. դ-դ. կայուած էին նշուած տների, նաեւ Բագրատունիների հետ (յիշենք Թորոս Խաղբակեանին Սանդղկավանքում): Անիում ճանկող արծուի քանդակ ունի նաեւ պալատական եկեղեցին (կառուցուել է մինչեւ Թ. դ.):

Դսեղում՝ այստեղ երկու եկեղեցիներ՝ գիւղամիջի (կ. դ.) եւ Բագրատաքաշ վանքի գաւիթը (Ժ. դ.) ունեն երկդլխանի ճանկող արծիւների քանդակներ՝¹⁴

¹² ՏԵ՛ս Հայկական զինանշաններ, մաս I, նկ. 56:

¹³ ՏԵ՛ս նոյն, նկ. 58, 58ա:

¹⁴ ՏԵ՛ս նոյն, նկ. 49, 50:

Հոռի բերդի խաչքար՝ այստեղ աւատապետական գերադասի դիմաքանդակից ներքեւ պատկերուած են նրա հպատակ իշխանութիւններից երեքի զինանշանները՝ յովազ կամ կատուալընտանիքի այլ ներկայացուցիչ (Կիւրիկեանների նշան), ցուլ շատ նման Գեղարդի ցլագլխին, եւ արծիւ (բայց ոչ ճանկող): Մեր կարծիքով, վերջին երկուսը կապուած են Գեղարդի պատկերաքանդակի համապատասխան քանդակների եւ նրանց աւատապետական զինակիրների հետ: Խորանաշատում՝ Ս. Աստուածածին (գլխաւոր) եկեղեցու արեւելեան ճակատին, Խաղբակեան Զաջուռ իշխանի զինանշանն է¹⁵:

Հաղարծնի վանքում՝ գաւթի առաստաղում, նրա հիւսիս-արեւմտեան հատուածի սալերի վրայ փորագրուած են երեք շրջանաձեւ վարդեակ եւ շրջագծի մէջ առնուած ճանկող արծիւ¹⁶:

գ. Յուլի խումբը

Բացի Գեղարդի քանդակից ցուլի գլուխ ունի նշուած Լոռուայ խաչքարը եւ ժԳ. դ. կառուցած Մշկավանքի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան ճակատի քանդակը (նկ. 41):


Ահա զինանշանների այս երեք խմբերն են, որ կազմել են Խաղբակեան տոհմի շքահանդէսային հաւաքական քանդակապատկերը: Եռանդամ այս յօրինուածքը ունի եռաստիճան կառոյց, որը կազմուել երկու եղանակով, առաջինը՝ նշանները դասաւորուած են համապատասխան տոհմի ներսում իշխանութիւնների քաղաքական ազդեցութեան, այսինքն աւատապետական նուիրապետութեան սկզբունքով: Այդ դէպքում ամենաազդեցիկը ցուլի նշանը կրող տոհմաճիւղն էր: Կարծէք, այդ էր վկայում այն մեծ օղակը, որը ցուլը պահում է բերանում եւ որը միացած է առիւծներին կապող շղթային, օղակի միջոցով հաւաքական յօրինուածքի երկու անդամները միանում են իրար: Բայց ցլի նշանով տունը չի նշմարւում Խաղբակեանների ներքին ճիւղաւորման մէջ եւ նրա ներկայացուցիչներին յանուանէ այսօր անհնարին է որոշել: Կարելի է միայն կապել նրան Լոռուայ եւ Մշկավանքի ցուլագլուխ նշանների տէրերի հետ:

ժԳ. երկրորդ կէսին Խաղբակեանների տոհմում ամենաազդեցիկը Պուօշ իշխանի տունն էր, կարելի է մեծ հաւանականութեամբ ասել, որ զոյտ առիւծները հէնց այդ ճիւղի նշանն են,

¹⁵ Հայկական Զինանշաններ, Մաս I, էջ 42:

¹⁶ Տե՛ս Ս. ՄՆԱՑԱԿԱՆՆԵԱՆ, նշ. ախատութիւնը, էջ 130, նկար 53:

քանի որ այդ նշանը ներկայ է Գլաձորի համալսարանում գըրուած ձեռագիր գրքերում, իսկ համալսարանի հովանաւոր ու հիմնադիրներն էին Խաղբակեաններն եւ մասնաւորապէս Պոօշիշանը:



Նկ. 41

Խաղբակեանների զինանշան (ցուլի գլուխ): Մշկավանի

Եռաստիճան կառոյցի ներքեւի մասում է գտնում ճանկողարծիւը: Սա անկակած, Մամիկոնեանների նշանն է, որը ժԳ. դ. հանդէս է գալիս երեք տարբերակներով:

Առաջին տարբերակը՝ դարերի խորքից եկող տոհմի աւանդական խորհրդանիշն է՝ ճանկող արծիւ, յիշւում է Փաւստոս Բուզանդի կողմից, քանդակուած է Զուարթնոցի տաճարի սիւների խոյակներում (առանց խոյի): Բայց յայտնի է նաեւ մէկ այլ հին յօրինուածք՝ երկգլխանի ճանկող արծիւ եւ գոյգ առիւծներ:

Այդ նշանը առկայ է Դսեղի ե. դ., եկեղեցում: Մամիկոնեանների նշուած երկու նշանները կրկնում են նաեւ ԺԳ-ԺԴ. դդ. Կառոյցներում, ընդ որում երկգլխանի արծիւը բացառապէս Դսեղի իշխանութեան մէջ, իսկ աւելի պարզ օրինակը՝ մի գլխանի՝ տարբեր վայրերում:

Յատկանշական եւ շատ հետաքրքիր փաստ է, որ Գեղարդի Կաթողիկէ եկեղեցու թմբուկի վրայ քանդակուած Խաղբակեանների զինանշանի հաւաքական օրինակում (այդ մասին ասուեց քիչ վերը) արծուի թեւերը ունեն օղակներ, ինչպէս Դսեղի Բարձրաքաշ վանքի եւ Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցու քանդակներում: Թեւերի վրայ օղակները Դսեղի Մամիկոնեանների արծուին բնորոշ յատկանիշներից են, որոնք եւ հաստատում են Գեղարդի թմբուկի արծուաքանդակի կապը Դսեղի արծուաքանդակի հետ:

Կայ նաեւ երրորդ տարբերակ, որը առաջ է եղել ԺԳ. դ., նրա մասին կը խօսուի ստորեւ:

Եռաստիճան կառոյցը կարող էր կազմուել նաեւ գեղարուեստական տպաւորութեան սկզբունքով, որի գլխաւոր հատուածը կազմում էին առիւծները, իսկ միւս երկուսը աւելի ճոխացնում պատկերը, բայց յօրինուածքի հեղինակը կամ պատուիրատուն չէր կարող հաշուի չառնել իրականում գոյութիւն ունեցող ճիւղաւորման աստիճանակարգումը՝ առաջնութիւնը չտալ գահերէց ճիւղին: Ուստի աւելի հաւանական ենք համարում զինանշանի կառոյցի առաջին եղանակը:

Այսպիսով, Գեղարդում քանդակուած Խաղբակեանների հաւաքական տոհմական նշանը արտացըլում է դարաշրջանի՝ զարդացած աւատապետութեան բնորոշ տոհմերի բազմաճիւղաւորումը, այդ իշխանութեան մասնատումը մի քանի ճիւղերի: Բայց նոր իշխանական տները որպէս կանոն պահպանում էին կապը գլխաւոր (գահերէց) տան հետ, համախմբւում նրա շուրջ ծառայութեան միջոցով: Այդպէս էր վիճակը Սիւնիքում, Վասպուրականում, Բագրատունիների մօտ: Նոյնը տեղի էր ունենում եւ Խաղբակեանների տոհմում, սրանց ճիւղերը համագործակցում էին, յայտնի է Պուշ իշխանի սերտ կապը Դսեղի Մամիկոնեանների հետ եւ նրա նիւթական օժանդակութիւնը Բարձրաքաշ վանքի ժամատան կառուցմանը (1247)¹⁷: Ճանկող արծուի ներկա-

¹⁷ Տե՛ս Պոօշիան ֆեոդալական տոհմի ծագումնարանութիւնը, էջ 66, 67:

յութիւնը Խաղբակեանների հաւաքական զինանշանում եւ Կաթոռ-դիկէի թմբուկի քանդակում հաստատում է, որ Դմեղի իշխանները եւ Պուշ իշխանի տունը գիտակցում էին իրենց արիւնակցական կապը եւ այն դրսեւորուել է նաեւ առօրեայ գործերում:

Այսպիսով, Խաղբակեանների հաւաքական զինանշանը դարձրջանի աւատապետական եւ նույրապետական կառուցուածքին բնորոշ երեւոյթ է, այն կարելի է հասկանալ զարգացած աւատապետութեան, այն է «իշխանական» (այլ ոչ նախարարական) համակարգի ներքին կառուցուածքի հիմքի վրայ:

ՅՈՒՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ԺԳ. դ. ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԻ ՅՈՐԻՆՈՒԱԾՔԻՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՆՇԱՆՆԵՐՈՒՄ

Զաքարեանների իշխանապետութեան շրջանում հայկական զինանշանները ապրեցին զարգացման մի նոր փուլ, առաջ եկան նոր երեւոյթներ ինչպէս հաւաքական յօրինուածքներում, այնպէս էլ առանձին պատկերանշաններում (էմբլեմաններում):


ԺԳ-ԺԳ. դդ. Նոր երեւոյթները պետական եւ տոհմական զինանշաններում աւանդական կանոնների յետագայ զարգացման արտայայտութիւններն էին, դա մի բնական երեւոյթ էր, որի զարգացումը արհեստականորէն խանգարուել էր ԺԱ. դ. երկրորդ կէսին օտար տիրապետութեան պատճառով, իսկ ԺԲ. դ. վերջից, անկախութեան եւ պետականութեան վերականգնման չնորհիւ, շարունակեց իր ստեղծագործական ընթացքը:

Նորը, յենուելով աւանդական կանոնների վրայ, զինանշաններում աւելացնում էր ժամանակի պահանջներից բխող արուեստի նոր դրսեւորումներ, զրա հետեւանքով ստեղծում էր նոր որակ՝ հին աւանդոյթի եւ նոր մտայդացման միաձուլում:

Մայր-օրինակները, որպէս կանոն, Բագրատուննեաց շրջանի զինանշաններն էին իրենց հաստատուն կանոններով: Բայց առանձին նախատիպեր գալիս էին շատ աւելի հին ժամանակներից, հասնելով մինչեւ Դ., Արշակուննեաց շրջան:

Զինանշաններում նոր երեւոյթներից էր տոհմական նշանների շրջափակող եզրագծի կամ շրջանակի երեւան գալը: Նշանը տեղադրում է որոշակի հարթութեան մէջ եւ դրանով աւելի է ընդգծում նրա տարբերութիւնը սովորական զարդաքանդակներից:

Շրջանակի մէջ դրուած նշաններից են Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցու հանրայայտ ճոխ քանդակները: Եկեղեցին կառուցուել է որպէս դամբարան, ուր մեր կարծիքով թաղուել են այն երեք իշխանական տների ներկայացուցիչներ, որոնց զինանշանները քանդակուած են եկեղեցու երեք ճակատներին՝ արծիւ (Դսեղի Մամիկոնեաններ), քարայծ (Ազիզեկեաններ) եւ Եղնիկ յօշոտող յովագ¹⁸:



Նկ. 42

Խորհրդանիշ պատկերաժանդակներ:
Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցի


Նշուած երեք զինանշանները տեղադրուած են հիւսածոյ գեղեցիկ շրջանակների մէջ (նկ. 42): Այդպիսի շրջանակներ նախորդ դարերի նշաններում բացակայում են, միակ բացառութիւնն է Անիի յովազակիր քանդակը, որը շրջափակում է յօրինուածքի միայն մի մասը, դուրս թողնելով խաչը եւ նրա ոմբաձեւ պատուանդանը:

Եղվարդի քանդակներից քարայծը եւ առանձնապէս ճանկող արծիւը հանդիպում են նաեւ այլ կառոյցներում, բայց առանց շրջանակի: Քարայծը քանդակուած է Գեղարդի երկրորդ ժայռափոր եկեղեցում եւ Գնդեվազ գիւղի (Վայոց ձոր) հին գերեզմանոցի տապանաքարի վրայ:

Բայց պէտք է տարբերել ճանկող արծիւի երկու օրինակները՝ մէկի բաց թեւերում կան ոլորատիպ օղակներ, դա Դսեղի

¹⁸ ՏԵ՛Մ Հայկական զինանշաններ, մաս I, էջ 64, 77: Նկարներ՝ 64, 65, 69, 70, 70ա:


Մամիկոնեանների նշանն է, միւս օրինակներում օղակներ չկան՝ դա Խաղբակեան Ջաջուռ իշխանի տոհմանձիւղի նշանն է:



Նկ. 42ա

Եղվարդ, Ս. Աստուածածին եկեղեցի: Աստուածամօր եւ Յովիաննես Մկրտչի բանդակները արեւմտեան նակատում

Շրջանակի մէջ է դրուած նաեւ Դսեղի Մամիկոնեանների զինանշանը Բարձրաքաշ վանքում (Նկ. 43):



Նկ. 43

Դսեղի Մամիկոնեանների զինանշանը Բարձրաքաշ վանքում

Այս պատկերաքանդակի գլխաւոր մասը՝ երկգլխանի արծիւը գալիս է զարերի խորքից, նախատիպը գտնուում է հարեւանութեամբ՝ Դսեղ գիւղի է. դ. եկեղեցու պահպանուած թեւի ճա-

կատին: Սակայն Բարձրաքաշի արծիւը ունի նորոյթ՝ դա թեւերի օղակներն են, որոնք ընդօրինակում են Զուարթնոցի տաճարի փոքր սիւների խոյակների օղակները (նկ. 43ա): Զուարթնոցը նոյնպէս Մամիկոնեանների կառոյց է, կառուցողը՝ Ներսէս Գ. Իշխանցին Մամիկոնեան տոհմից էր եւ իր կառուցած տաճարի առանձին կանգնած չորս սիւների խոյակներում տեղադրել է տոհմական նշանի արծիւը:



Նկ. 43ա

Մամիկոնեան տոհմական նշանները: Զուարթնոց

Զուարթնոցում արծիւները եւ օղակները քանդակուած են առանձին, իսկ Բարձրաքաշ վանքի պատկերաքանդակում օղակները տեղափոխուած են գլխաւոր քանդակի վրայ եւ դարձել արծուի ինքնատիպութիւնը ընդգծող մի յատկանիշ: Այդպիսի օղակները ունեն միայն Դսեղի Մամիկոնեանների արծիւները (հմտ. Գեղարդի թմբուկի արծուի հետ): ԺԳ. դ. այս պատկերը դրուել է շրջանակի մէջ:

Շրջանակները արտացոլում են խորհրդանիշ արուեստի զարգացման նոր, աւելի բարձր փուլ, երբ խստանում են խորհրդանիշ պատկերագրութեան կանոնները, հասունանում է նրանց ամփոփ տարածութեան մէջ զնելու գաղափարը: Դրանով ընդգծում է նրանց տարբերութիւնը սովորական զարդաքանդակներից,

ուժեղանում է տպաւորութիւնը: Մեր համոզմամբ շրջանակները կատարում էին նոյն դերը, որը եւրոպական գինանշաններում կատարում էին վահանները: Շրջանակները վահանների նախատիպերն Հայստանում եւ եթէ մեր երկրում յաջորդ դարերում պահպանուէր պետականութիւնը, ապա շրջանակները կը ստանային աւելի աւարտուն եւ կատարեալ ձեւ:

ԺԳ. դ. խորհրդանիշ արուեստում միւս նորութիւնն էր տոհմական գինանշանի հաւաքական պատկերը: Խաղբակեանների գինանշանի հաւաքական յօրինուածքը Գեղարդում նոր երեւոյթ էր եւ նախատիպ չունի նախորդ դարերի գինանշաններում: Յամենայն դէպս այդպիսիք այսօր յայտնի չեն, իսկ եթէ յետագայում ի յայտ գան, ապա անհրաժեշտ ճշտումներ կը կատարուեն նրանց ձեւաւորման ժամանակի շուրջ:

ԺԳ. դ. տոհմական եւ պետական գինանշաններում աւելի յստակ տեղ է գրաւում ուղեկցող մի բաղադրիչ՝ դա օձի կամ վիշապի գլուխն է: Եթէ ուշաղիր նայենք նոր Վարագավանքի Զաքարեանների գինանշանին, ապա կը տեսնենք, որ երկմարմին յուշկապարիկի մէջքին հիւսուող ճիւղերը ոչ թէ կենաց ծառ է (ինչպէս գրել էինք առաջին մասում), այլ վիշապագլուխներ (տե՛ս սոյն աշխատութիւն, նկ. 36):


Խաղբակեանների գինանշանում առիւծների պոչերը նոյնպէս աւարտում են վիշապների գլուխներով (նկ. 39): Այստեղ զգացում է Ժ-ԺԱ. դդ. խորհրդանիշ կանոնների ազդեցութիւնը (օրինակ ներկան Տաթեւի վանքում, Բագրատունիների տոհմական գինանշանում):

Զինանշաններում նոր երեւոյթներ երեւան էին գալիս արդէն Ժ. դ., նորութիւն էին, օրինակ, վարագոյրները Սանդղավանքի մանրանկարներում: Բայց ԺԳ. դ. խորհրդանշաններում առ այժմ վարագոյրներ չեն հանդիպել:

ԺԳ. դ. տարածում է գտնում մի ուշագրաւ երեւոյթ, որը նախորդ (Ժ-ԺԱ. դդ.) հանդիպում է հագուաղէպ:

Դա գմբէթների թմբուկների շրջանաձեւ հարթութիւնների օգտագործումն է նշաններ կամ նոյնիսկ բարդ յօրինուածքներ տեղաղբելու համար: Դրա բնորոշ օրինակն է Գեղարդի Կաթողիկէ եկեղեցու թմբուկի քանդակաշարը: Թմբուկը զոյգ կիսասիւներով բաժանուած է 16 առանձին հատուածների, իւրաքանչիւր հատուած ունի կամար (նկ. 44): Թմբուկի հարաւարեւելեան կողմից կամարաշարում հորիզոնական դիրքով քանդակուած են

Խաղբակեանների զինանշանի բոլոր բաղադրիչները եւ լրացուցիչ մի նշան, դա իշխանութեան նշան է (արծուկից աջ), հանդիպում է արդէն նախորդ՝ ԺԱ-ԺԲ. դդ.: Քանդակներում (օր. Սանահնի կամրջի Կիւրիկեանների զինանշան՝ կատուաընտանիքի կենդանու ականջներում): Նոյնպիսի նշան ունի նաև Եղվարդի յովազեղնիկ քանդակը (նկ. 42):



Նկ. 42

Խորհրդանիշ քանդակների շարք Գեղարդի գլխաւոր եկեղեցու քմբուկի վրայ

Պէտք է ասել, որ Եղվարդի եւ Գեղարդի թմբուկների գեղարդուեստական ձեւաւորման մէջ պարզորոշ զգացուում է ոճական ընդհանրութիւնը՝ Եղվարդում եկեղեցու ճակատները նոյնպէս ունեն զոյտ կիսասիւների չարք, որոնք աւարտուում են կամարներով, իսկ Գեղարդի Կաթողիկէի թմբուկը ներքեւում ունի հիւսածոյ շրջագիծ, ոճականօրէն նմանուող (աւելի ճիշտ՝ նախորդող) Եղվարդին¹⁹:

Քանդակազարդեր ունեն նաև գմբէթների թմբուկները Հառիճում, Հաղարծնում, Տիգրան Հոնենցի եկեղեցին, Խորանաշատ եւ այլ վանքեր: Բայց ոչ խորհրդանիշ բնոյթի: Նրանց դերը

¹⁹ Հմմտ. Հայկական զինանշաններ, մաս. I, նկ. 69:

պարզ չէ եւ պէտք է ճշտուի՝ արդեօք կապ ունեն նոյն եկեղեցիների խորհրդանիշ քանդակների հետ թէ լոկ զարդաքանդակներ են:



Նկ. 45

Մամիկոնեանների գինանշանի նիւթական տարրերակ:
Մակարավանք, գլխաւոր եկեղեցի

Ժ.դ. եկեղեցիներից միայն կարսի կաթողիկէ եկեղեցին թմբուկի վրայ ունի կտիտորական քանդակներ, որոնց հետ առնչւում են ներսի քանդակները: Անիի Մայր տաճարը քանդակներ ունեցել է թէ ոչ հնարաւոր չէ պարզել, քանի որ գմբէթը չի պահպանուել:

ԺԳ. դ. հանդէս է գալիս Մամիկոնեան գինանշանի նոր օրինակ Աղստեւի հովտի կառոյցներում՝ Հաղարծնի եւ Մակարավանքի քանդակներում: Առաջինում աւանդական արծիւը թառած է եկեղեցու մանրակերտի վրայ: Մտացուել է ոչ աւանդական պատկեր՝ արծիւ, որը կարծէք հովանաւոր է եկեղեցուն: Այս զոյ գը միասնութեան մէջ կարելի է ընկալել որպէս աշխարհիկ իշխանութեան խնամակալութիւն եկեղեցու հանդէպ:

Արտակարգ հետաքրքրութիւն է ներկայացնում Մակարավանքի Գլխաւոր եկեղեցու հարաւային ճակատի զինանշանի յօ-

րինուածքը: Այն սիւժետային է՝ արծիւը կանդնած է զոհասեղանի վրայ, նրա կրծքի տակ կանգնած է մի փոքրամարմին կենդանի: Ի տարբերութիւն աւանդական պատկերին, արծիւը ճանկող չէ, հակառակ՝ կենդանին թաքնուել է ճանկերի հեւեւից, իսկ արծիւը իր կեցուածքով պաշտպանում է նրան արտաքին հարուածից:

Այս օրինակում արծիւը կենդանու պաշտպանն է:

Զոհասեղանի սեան վրայ քանդակուած է մարդու պատկեր (Նկ. 45): Քանդակների դասաւորութիւնը զոհասեղանի հետ միասին յիշեցնում է իսահակի զոհաբերութեան տեսարանը, որի մոտիւը տարածուած էր վաղ միջնադարեան հայկական քանդակագործութեան մէջ (Փառնահովիտ, Կողբ, Բերդաձոր)²⁰:

Քանդակում զոհասեղանի սեան վրայ հասակն առած մարդ է, նա իսահակ լինել չի կարող, եթէ ընդունենք, որ պատկերուած է Աբրահամը, ապա արծուի տակ կանդնած կենդանուն կարելի է նոյնացնել իսահակի հետ, այդ դէպում, արծիւը հանդէս է գալիս աստծու դերում, որը վրկում է իսահակին զոհաբերութիւնից: Մեր առաջարկած վարկածը նախնական բնոյթ է կրում եւ յետագայում նոր փաստերով կարող է հաստատուել կամ ժիստուել, բայց ուշագրաւը այն է, որ Մամիկոնեանների զինանշանում արտացոլուած է սիւժէ, տրուած է գաղափարական որոշակի իմաստաւորում: Արդեօք այդ իմաստաւորումը կապուած է տոհմական աւանդոյթների կամ պատումի հետ, այլաբանօրէն արտայայտում է այն դերը, որը կատարել են Մամիկոնեանները Հայաստանի պատմութեան մէջ, թէ^o արձագանքում է նրանց պատմութեան վերջին ժամանակաշրջանի որեւէ կարեւոր իրադարձութիւնը, որը մեզ առ այժմ անյայտ է: Մեր կարծիքով, ԺԲ-ԺԳ. դդ. նրանց տոհմի հետ առնչուող իրադարձութիւնները արտացոլում են դտել Հաղարծնի եւ Մակարավանքի քանդակներում, ընդ որում, բացառուած չէ, որ այդ իրադարձութիւնները եւ նրանց պատկերաքանդակ արտացոլումները այս կամ այն չափով կապուած են միմեանց հետ: Իսկ Մամիկոնեանների մասնակցութիւնը ԺԳ. դ. Աղատեւի հովտում Զաքարեանների իրադարձած կառուցումներում անկասկած է, այդ հաստատում է Մամիկոնեանների զինանշանը Հաղարծնի գալթի առաստաղում,

²⁰ Լ. Ա.ԶԱՐԵՍՆ, Վաղ միջնադարեան հայկական քանդակը, էջ 92, նկար 23:

նաեւ Անտոն եւ Սարգիս Դսեղցի եղբայրների յիշատակումը Հաղարծնի գաւթի արձանագրութիւնում²¹:

ԺԳ. դ. Հայկական խորհրդանշանները ապրեցին զգալի առաջընթաց, պահպանելով աւանդական կանոնները, նրանք միաժամանակ հարստացրեցին խորհրդանշանների արուեստը յօրինուածքային նոր լուծումներով, արտաքին ձեւաւորման նոր եղանակներով։ Հայկական միջնադարեան զինանշանների լաւագոյն նմոյշներից շատերը կերտուել են ԺԳ. դ., նրանք ներառել են նախորդ դարաշրջանների օրինակները, բայց նրանց միջոցով արտայայտել են իրենց դարաշրջանի ոգին եւ պատմական իրողութիւնը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Զինանշանները որպէս պատմական գիտաճիւղ

Սոյն աշխատութեան մէջ շարադրած նիւթը վկայում է, որ հայկական զինանշանները ունեն վաղեմի պատմութիւն, անտիկ (հելլենիստական) շրջանում այն արդէն ձեւաւորուել էր որպէս պետական իշխանութեան խորհրդանիշապատկերագրութիւն, զինանշան։ Հին Հայաստանը ունեցել է (ինչպէս հելլենիստական շրջանի այլ պետութիւններ) զինանշանի երկու օրինակ՝ մեծ եւ փոքր։

Ավասոսանքի արժանի է այն փաստը, որ շատ երկար ժամանակ անտիկ շրջանի հայկական զինանշանները քննութեան չեն ենթարկուել, մինչդեռ դրա համար փաստացի նիւթը վաղուց գիտական շրջանառութեան մէջ է, հրատարակուած են Զ. Պտուկեանի հիմնարար ուսումնասիրութիւնը եւ Պ. Սապաղեանի յօդուածները Արտաշէսեանների դրամների վերաբերեալ, պեղուած եւ հրապարակուած է հարուստ հնագիտական նիւթ։

Արտաշէսեանների դրամների պատկերանշանները պարզ ցոյց են տալիս, որ դեռևս հին ժամանակներում Արարատ լեռը

²¹ Դիւան հայ վիմագրութեան, պրակ Զ, Խշեւանի շրջան։ Կազմեցին Ա. Ահագեսեան, ՀՌ. ԶԱԼՆՓՕԼԱԴԵԱՆ, Երեւան, 1977, էջ 34, արձանագրութիւն № 54։

խորհրդանշել է Հայաստանը, իսկ լրացուցիչ բաղադրիչների հետ հանդիսացել է երկրի պետական զինանշան:

Արարատի պատկերով դրամները գիտական մամուլում հրապարակուել են 1972 եւ 1975 թթ., բայց ցարդ ուշադրութեան չեն արժանացել:

Արտաշէսեան արքայատոհմից բացի զինանշաններ են ունեցել նաեւ ազնուական այլ տոհմեր, որոնց նշանները պատկերուած են քարէ կնիքների վրայ: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ անտիկ կնիքների պատկերները կրկնուում են դարեր անց՝ Արշակունիների դամբարանի եւ Քասախի բազիլիկայի քանդակներում, եւ նոյնիսկ շատ աւելի ուշ շրջանում՝ Զաքարեան Հայաստանի եկեղեցական քանդակներում: Այդ առումով Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցու նշանները ունեն պատմաաղբիւրագիտական մեծ արժէք, այստեղ 1500 տարի անց վերարտադրուում են Հայկական զինանշանների հնագոյն նմոյշները, ինչպէս, օրինակ, առիւծի եւ եղնիկի զոյգը (նկ. 16ա)²²: Անտիկ շրջանից միւս պատկերն է՝ զոյգ եղջերուներ, որոնց միջեւ անհասկանալի մի կենդանի է: Այս պատկերի կրկնութիւն է Քասախի բազիլիկայի զոյգ եղջերուների քանդակը (մէջտեղում խաչ) (նկ. 15 եւ 16ա)²²:

Վերջապէս, կնիքներից մէկը ունի իր զուգահեռը Աղջի դամբարանի յայտնի քանդակում՝ Հայկ-Օրիոնի մարտը խոզի հետ (նկ. 16ա)²³:

Նշուած զուգահեռները վկայում են, որ Արտաշէսեան շրջանի շատ ազնուական տոհմեր գոյատեւել են նաեւ Արշակունիաց Հայաստանում որպէս աւատապետական տոհմեր, բայց պահպանելով հին նշանները: Նրանց թւում եղել են նաեւ Երուանդունի-Արտաշէսեան տոհմի ներկայացուցիչներ: Արտաշէսեան (ինչպէս եւ Արշակունի) արքայատոհմը չէր կարող միանդամից վերանալ ասպարէզից, ընկել էր նրանց թագաւորութիւնը, բայց մնացել էին տոհմի անդամները: Արշակունիաց շրջանում նրանք կարող էին հանդէս գալ նոր ազգանունով, բայց կային նաեւ աւատական ազնուականներ հին արքայական ազգանունով, նրանցից մէ-

²² ՏԵ՛ս սոյն յօդուածի Ա բաժնում (Բազմավէպ 2003, էջ 171 եւ 176): Նկարները աե՛ս նաեւ Բ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Ակնարկներ հիմ Հայաստանի արուեստի պատմութեան, տախտակ XLIX.

կին յիշատակում է Ե. դ. պատմիչ Ղազար Փարպեցին, դա Վահան Մամիկոնեանի զինակից Ներաչս Երուանդունին է²³:

Աղջի դամբարանի քանդակները պատմական բացառիկ արժէք ունեն, նրանց շարքը մի հանգոյց է, որը կապում է երկու դարաշրջան՝ անտիկ եւ վաղ միջնադարը: Միաժամանակ նա կապում է միջնադարի երկու ժամանակաշրջաններ՝ Դ. դ. (վաղ միջնադար) եւ Ժ. դ. (զարդացած աւատապետութիւն): Այսպիսով, Աղջի քանդակները միացնում են իրար երկար ժամանակաշրջանի (մ.թ. ա. Բ. դ.- մ.թ. Ժ. դ.) բեւեռները: Ներկայումս յայտնի չեն այն յուշարձանները կամ գտածոները, որոնք կարող են ամբողջացնել այդ շղթան: Բայց նրանք անկասկած կան, որովհետեւ Դ. դ. Աղջի քանդակապատկերները չեն կարող Ժ. դ. դ. վերականգնուել պարզապէս յիշողութեամբ: Այդ հնարաւոր էր միայն այն դէպքում, եթէ առկայ լինէր հին տոհմերի նոր սերունդը, չնայած նրանց ազգանունները կազմուել էին նոր շառաւիղների աւագանու անուններից:

Իսկ որ Արտաշէսեանների եւ Արշակունինների շառաւիղները հասել էին մինչեւ Ժ. դ., հաստատում են Եղվարդի եւ Մակարավանքի նշանները: Նոր տուեալներ կարող է ի յայտ բերել նոր Վարագավանքի քանդակների մանրազնին քննութիւնը, որը ցարդ չի կատարուած:

Ասածի կապակցութեամբ ցանկանում ենք առանձնացնել մի հարց:

Մեր կարծիքով Երուանդունի-Արտաշէսեանների խորհրդանշանները ընդհանրութիւն ունեն Մամիկոնեանների տոհմական զինանշանի հետ:

Արշամ Երուանդունու դըամի պատկերը՝ ճանկերում կայծակ պահած արծիւը («Ճանկող արծիւ») յօրինուածքային կառուցուածքով շատ հարազատ է Մամիկոնեանների խորհրդանշի յօրինուածքին, որը նկարագրել է պատմիչ Փաւստոս Բուզանդը եւ նրանից օգտուող Մեսրոպ Վայոցձորցին (Ժ. դ.): Նրանք Մամիկոնեանների զինանշանը նկարագրում են որպէս արծիւ («արծուանշանք»), որը «աղեղնաձիգք» է, իսկ նրանց դրօշը «աղեղնադրօշք»: Այդ վկայութիւնների հիման վրայ Վ. Հացունին եղակացնում է, որ Մամիկոնեանների զինանշանն էր արծիւը, որը

²³ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 280, 281:

ճանկերում պահում էր աղեղ: Նոյն պատկերը ունէր եւ դրօշը^{24:} Յաջորդ դարերում աղեղին փոխարինել է գառնուկը կամ այլ կենդանի:

Միւս կողմից, աղեղը եղել է Արտաշէսեան խորհրդանիշ բաղադրիչներից մէկը, ինչպէս այդ երեւում է Հայաստանին վերաբերող հռոմէական դրամի պատկերից (Անտոնիոսի եւ Վերոս-Աւրելիոսի կողմից կտրած (նկ. 12 եւ 13ա)^{25:} Երկու տոհմերի՝ Արշամ Երրուանդունու (նոյն Արտաշէսեան) եւ Մամիկոնեանների զինանշանների նմանութիւնը հիմք է տալիս նախնական դիտողութիւնների համար:

Նախ պէտք է նկատի ունենալ, որ Դ. դ. վերաբերում է առաջին գրաւոր տեղեկութիւնը Մամիկոնեանների զինանշանի մասին, բայց պարզ է, որ վերջինը ձեւաւորուել է աւելի վաղ: Երկրորդ, Մամիկոնեան ազգանունը շրջանառութեան մէջ է մտել Դ. դ. 20-ական թթ. վերջում, Տրդատ Գ.ի գահակալութեան վերջին տարիներին: Մովսէս Խորենացու հաղորդման համաձայն Մամիկոնեանների Նահապետ Մամդոնը սպանել էր թագաւորի դէմ ըմբոսատացած Տարօնի տէր Սլկունի Սղուկին: Որպէս պարգև Եմամդոնը ստացել էր Տարօնը եւ բացի այդ, Տրդատը նրա անունով տոհմը կոչում է Մամդոնեան^{26:}

Ագաթանգեղոսի «Պատմութիւնից» յայտնի է, (§ 860), որ այդ ժամանակ Մամիկոնեանների նահապետն էր սպարապետ Արտաւազգը: Մինչ այդ տոհմի ազգանունը պէտք է լինէր Խաղբակեան, որոր ծագումով կապուած էր Գուշարեանների հետ, Հայկի սերնդից^{27:} Պատմաբանասիրութեան մէջ տարածում գտած Մամիկոնեանների «ճենական» ծագման վարկածը Մովսէս Խորենացու մի վկայութեան սխալ մեկնաբանութեան արդիւնք է եւ ակնյայտօրէն հնացած: Առաջիկայ հետազօտութիւնները պէտք է պարզեն Գուշարեանների առնչութիւնը Արտաշէսեանների հետ, որից յետոյ հնարաւոր կը լինի վերջնական եղրակացութիւն անել Մամիկոնեանների եւ Արտաշէսեանների տոհմական ազգակցութեան մասին, որին ակնարկում են զինանշանները:

²⁴ Վ. ՀԱՅՈՒՆԻ, Հայ դրօշներ պատմութեան մէջ, Վենետիկ, 1930, էջ 63:

²⁵ Տե՛ս սոյն յօդուածի Ա բաժնում (Բազմավէպ 2003, էջ 153 եւ 156):

²⁶ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԾՈՒԹՅՈՒՆ Պատմութիւն հայոց, գիրք Բ, գլ. ԶԵ, էջ 148-149:

²⁷ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ստեղծման 1500-ամեակը: Միշտ ազգային գիտաժողովի դրոյթներ, Երեւան, 1991, էջ 46, 47:

Սոյն հարցի կապակցութեամբ պէտք է տանք մի պարզաբանում.

«Հայկական զինանշանների, առաջին պրակում գրել ենք, որ Հայաստանը Հռոմին ենթարկելու առթիւ Օգոստոս կայսը դրամ է կտրել, որի Բ երեսին պատկերուած է ճանկող արծիւ, եւ գրուած է լատիններէն մակագրութիւն՝ «Հայաստանը Նուածուած» («ARMENIA CAPTA»): Ըստ մեր ենթադրութեան պատկերը ներկայացնում է նուաճուած երկրի խորհրդանշանը, այսինքն Արտաշէսեանների զինանշանը: Վերջինը համընկնում է Մամիկոնեանների զինանշանի հետ: Բացի այդ, հետեւելով դրամագիտ Խ. Մուշեղեանի կարծիքին, գրել ենք, որ Տիգրան Բ.ի թագի վրայ պատկերուած երկու թուչուններն ու աստղը (իրականում արեւը) ոչ թէ զինանշան է, այլ արեւի պաշտամունքի խորհրդանիշ: Որպէս տրամաբանական հետեւութիւն եզրակացրել ենք, որ երկու տոհմերի խորհրդանշանների նմանութիւնը պատահական չէ²⁸:

Պէտք է ասել, որ տուեալ դէպքում մեր կողմից թոյլ է տրուած շփոթութիւն՝ հոռմէական դրամի վրայ պատկերուած է Յաղթանակի աստուածուհին, որը յենւում է ցուլի վրայ²⁹: Ինչ վերաբերում է մեր (գրքում տեղադրուած նկարին, ապա այն մեր կողմից արտաշէսեան զինանշանի հնարաւոր տարբերակը վերարտադրելու մի փորձ է, իսկ նրա տեղադրումը մենագրութեան առաջին մասում՝ շտապողականութեան արդիւնք: Հաշուի չենք առել նաեւ միւս հեղինակների կարծիքը, որոնք Տիգրանի թագի պատկերը համարել են զինանշան (այդ հեղինակների կարծիքները տրուած են սոյն աշխատութեան առաջին գլխում): Տալով սոյն բացատրութիւնը ուղղում ենք մեր կողմից թոյլ տրուած սխալը:

Միւս կողմից, Արտաշէսեան խորհրդանշանի ճանկող արծուի օրինակը իրօք շատ հարազատ է Մամիկոննեանների Դ. դ. զինանշանին: Այդ երկու տոհմերի ծագումնաբանական կապը, նրանց զինանշանների յօրինուածքային նմանութեան հարցերը

²⁸ Հայկական զինանշաններ, մաս I, էջ 79, ծան. I եւ նկար 74դ: Խ. Մուշեղեանի յօդուածը տե՛ս՝ Հին Հայաստանի դրամական շրջանառութեան պատմութիւնից, «Պատմա-քանախիրական հանդէս», 1970, N3, էջ 81, 82:

²⁹ Տե՛ս Զ. Թօնիկէսն, Հայաստանի վերաբերեալ հոռմէական դրամներ և մելպալիոններ, էջ 44, 51, նկար 7, նաեւ տախտակ 1, նկար 7: Խ. ՄՈՒՇԵՂԵՍՆ, նշ. յօդուածը, նկար՝ 82-83 էջերի միջեւ:

լինելու են մեր առաջիկայ ուսումնասիրութեան կարեւոր խնդիր-ներից մէկը:

Բագրատունեաց շրջանի զինանշանները սոյն ուսումնասիրութեան մէջ ներկայացուած են երկու նոր եւ կարեւոր օրինակ ներով՝ դա Արշարունիքի Աւետարանն է՝ որը բոլորովին անհիմն անուանում են «Մողնու» եւ Կարսի Մայր տաճարի քանդակախումբը։ Նրանց վերլուծութիւնը տրուեց վերը, այստեղ որպէս ամփոփում պէտք է ասել, որ նշուած երկու յուշարձանների շնորհիւ հնարաւոր է դառնում հաստատել Հայաստանում ժ-ժԱ. դդ.։



Նկ. 46

Կիլիկիայի թագաւոր Լեւոն Բ-ի պատկերը
զինանշանի հետ՝ դրամի վրայ

Խորհրդանշանների համակարգի (ձեւաւորման փաստը եւ կատարել այդ համակարգի հետազոտութիւնը։ Անշուշտ, համակարգի կառոյցը չի սահմանափակուել այսօր մեզ յայտնի օրինակներով, եղել են եւ այլ մանրանկար եւ քանդակապատկեր նշաններ, որոնք առ այժմ մեզ անյայտ են։ Մնում է յայտնաբերել նրանց։

Շարունակելով Բագրատունեաց տոհմական զինանշանի կառոյցի վերլուծութիւնը, նշեցինք շուշանի որոշակի դերը որպէս խորհրդանշանների լրացուցիչ բաղադրիչ։ Այդպիսին է այն Ման-

դըղկավանքի Աւետարանի մանրանկարներում եւ Զաքարեանների զինանշանում: Շատ բնորոշ է այդ տեսակիտից շուշանի պատկերը Կիլիկիայի Լեռն Բ. թագաւորի զինանշանում՝ թագաւորը բազմած է գահի վրայ, ձախ ձեռքում խաչ է, աջում շուշան: Երկուսն էլ նրա թագաւորական իշխանութեան լրացուցիչ խորհրդանիշն են (նկ. 46):

Այստեղ եւս շուշանը տրուած է ոճաւորուած տեսքով (հմմտ. Նկար 35ա), ուր տրուած են միջազգային զինանշանագիտութեան մէջ ընդունուած շուշանի պատկերները, վերին շարք՝ բնական տեսքով, ներքին շարք՝ ոճաւորուած)³⁰: Ներքին շարքի մէջտեղի նկարը լրիւ համապատասխանում է Հայկական հերալդիկ նշաններում շուշանի վերը նշուած երկու օրինակներին:

Հայկական զինանշաններում կիրառուում էին նաեւ այսպէս կոչուած դիֆերենտներ՝ լրացուցիչ տարբերակիչ նշաններ: Դրանք են՝ կէտերը, աստղերը, կիսալուսինը, նիզակի ծայրը եւ այլ: Այդպիսիք ունեն Լեռն Բ.-ի դրամի զինանշանը (աստղ), Սանահնի գաւթում կիրիկեանների զինանշանը՝ օղակ Յովագի քանդակի գլխավերեւում³¹:

Դիֆերենտները նոյնպէս լայնօրէն կիրառուում էին միջազգային զինանշանագիտութեան մէջ եւ բերուած փաստերը վկայում են, որ զինանշանների հայ վարպետները պահպանում էին իրենց արհեստի միջազգային կանոնները:

Վերը ասուեց, որ Բագրատունիների տոհմական զինանշանի յօրինուածքում որոշակի դեր են կատարում երկու կամարներ, բայց նրանց դերը պարզ չէ: Քանի դեռ չի գտնուած կամարների նախատիպը, պէտք է որոնել նրանց զուգահեռները միւս մանրանկարներում:

Նմանատիպ կամարներով կիսախորան ունեն էջմիածնի Աւետարանի (989 թ.) երկու մանրանկարներ՝³²: Նրանք Ժ. Պ. Նկարուած մանրանկարներ են (Աւետարանիչներ)³³ (նկ. 47): Ընդ ու

³⁰ Տե՛ս Վ. ПОХЛЕБКИН, Международная символика..., с. 221, рис. 138.

³¹ Տե՛ս КАЗАМАНОВА, Введение в античную нумизматику, М., 1969, с. 156.

³² Տե՛ս Հայկական զինանշաններ, մաս I, նկ. 10, 28:

³³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2374 էջ 6ր-7ա:

³⁴ Մանրանկարների մասին տե՛ս ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ, Էջմիածնի Աւետարանի մասին մասին վերքերի մանրանկարների բուականը, «Հայ արուեստը միջնադարում», Երեւան, 1975, էջ 31, 51, 52:

րում նրանց կիսախորանի ձեւաւորումը լրիւ համընկնում է կջմիածնի Մայր տաճարի քանդակապատկերի յօրինուածքի հետ՝ զոյգ աղաւնիներ եւ կենտրոնում խաչ օղակի մէջ:



Նկ. 47

Էջմիածնի Աւետարան: Կամարներ

Նշուած երկու պատկերները ունեն ընդհանուր ելակէտ, նախատիպ, որը պէտք է գտնել: Այս երկուսի եւ 862 թ. մանրանկարի (Բագրատունիների զինանշան) համեմատական քննութիւնը հնարաւորութիւն կը տայ ամբողջացնելու Բագրատունիների զինանշանի յօրինուածքի իմաստաբանութիւնը:

Ժ. Տիերիի կարծիքով Կարսի տաճարի թմբուկի վրայ պատկերուած են 11 առաքեալներ եւ Մարիամ կոյսը, որին նա նոյնացնում է օձերի հետ կանգնած պատկերը: Ամբողջ քանդակախումբը ներկայացնում է Համբարձման տեսարան, որտեղ Քրիստոսին փոխարինում է գմբէթի խաչը: Առաքեալները, իբր շրջապատել են Մարիամին եւ իրենց շարժումներով արտայաց տում են զարմանք եւ հիացմունք: Բացի այդ, հաւատարիմ այն սկզբունքին, որը հայ արուեստում ամէն կերպ փնտրում է օտար ազդեցութիւն, Տիերիին գտնում է, որ հայկական այս Համբարձ-

ման տարբերակի ծագումը պէտք է փնտրել բիւզանդական արուեստում, առաքեալների պաշտամունքը Բիւզանդական կայսրութիւնից անցել է Հայաստան, ուր ժ-ժԱ. դդ. առաքեալները վայելում էին առանձին յարգանք³⁵:

Այս վարկածը բացայաց թիւրիմացութիւն է. 12 մարդկանց պատկերների մասին ասուեց վերը (բաժին Բ, գլ. Ա, § 2), օձերով կանգնածը տղամարդ է եւ իր զգեստով ու դիմագծով ոչնչով չի տարբերում միւս պատկերաքանդակներից:

Տիերին քանդակախմբի իմաստաւորումը յարմարեցնում է արդէն նախատիպ դարձած գծապատկերին, ընդ որում նրա կարծիքով տրոմպերի կենդանական քանդակները (արծիւ, ցուլ) եւ մարդկանց զոյգ գլուխները աւետարանիչների խորհրդանիշեր են: Նոյն իմաստը իբր ունեն կենդանիների եւ մարդագլուխների քանդակները Սանահնի Ս. Աստուածածնի եւ Գնդեվանքի եկեղեցիներում³⁶: Այս դէպքում նոյնպէս դրսեւորւում է նախատիպ դարձած աւանդական սկզբունքը՝ բոլոր դէպքերում առիւծի եւ ցուլի քանդակները համարել աւետարանիչների խորհրդանիշ:

Իրականում Կարսի տաճարի, Սանահնի եւ միւս կառոյցների քանդակները վերաբերում են աշխարհիկ կեանքին եւ գեղարուեստա-առարկայական ձեւով ներկայացնում են միջաւատապետական յարաբերութիւններին յատուկ փոխադարձ կապը: Այդ մասին մանրամասն խօսուել է համապատասխան բաժնում:

Օտար գիտնականները ծանօթ չեն հայկական կտիտորական զինանշանների քանդակաշարքերի կամ քանդակախմբերի կազմաւորման սկզբունքներին, չեն պատկերացնում, որ ժ-ժԳ. դդ. Հայաստանում եղել է քանդակաշարք կազմելու համակարգ, որոշակի սկզբունք: Եւ յաճախ հայկական օրինակներում տեսնում են օտար ազդեցութիւն, երբ այդպիսի ազդեցութեան հետք չկայ: Դրանում զգալի չափով մեղաւոր է նաեւ հայ պատմազինանշանագիտութիւնը, որը տասնամեակներ շարունակ աչքաթող է արել այդ կարեւոր ասպարէզը:

ԺԳ. դ. խորհրդանշանների առեղծուածքներից է Զաքարեանների զինանշանի խորհրդանիշը՝ յուշկապարիկը: Յայտնի է,

³⁵ Տե՛ս Ж. Մ. ТЬЕРРИ, Скульптурный декор... (Тезисы), с. 2-4; Նոյնը՝ J. M. THIERRY, La cathédrale des saints-Apôtres de Kars, էջ 47, 48:

³⁶ Տե՛ս Ж. Մ. ТЬЕРРИ, Скульптурный декор... (Тезисы), с. 5; Նոյնը՝ J. M. THIERRY, La cathédrale des saints-Apôtres de Kars, էջ 50, 51:

որ Զաքարեանները իրենց համարում էին Բագրատունիների տոհմակիցներ (Խվանէի արձանագրութիւնը Հաղարծնում, Սարգիս Մեծի դուստր Վանենու արձանագրութիւնը Սանահնում): Եւ դա միանգամայն հաւանական է, Անիի անկումից յետոյ Բագրատունիների մի մասը անցաւ Կապաղովկիա, Գագիկ Բ. Բագրատունու մօտ, Կիլիկիայում հայկական իշխանութեան հիմնադիրը Ռուբքնը նոյնպէս Բագրատունի էր: Ռուբիննեանների պետական նշաններում, որպիսիք ներկայացուած են Լեռն Բ. ի դրամների վրայ, պարզ երեւում է Բագրատունիների զինանշանի ազդեցութիւնը:

Սակայն Զաքարեանները ընտրեցին յուշկապարիկը, այս դիցաբանական կենդանու պատկերները նրանց նշաններում յայտնի են մի քանի տարբերակներով (մինչ այժմ չի պարզուած միայն Վահրամեան ճիւղի օրինակը)³⁷:

Ինչո՞վ էր պայմանաւորուած յուշկապարիկից ընտրութիւնը:

Ա. Մնացականնեանի բացատրութեամբ յուշկապարիկների ծնող-զոյգի գլուխների վրայ կարող էր դրուել տոհմի ընդհանուր նախնու իմաստն արտայայտող թագ: Նրանք կարող էին դիտուել որպէս պետութեան խորհրդանիշ, առանձին տիպի գաղաններ Աստուածաշնչում ներկայացնուում էին հին հայ աշխարհի չորս թագաւորութիւնները (Մարտատան, Պարսկաստան, Բաբելոն, Ցունաստան), ինչպէս Դանիէլ Մարգարէի տեսիլքում (Դանիէլ, է 17-19):³⁸

Եթէ ԺԲ-ԺԳ. դդ. պահպանուէին տեսիլքի աւանդոյթները (իսկ դա միանգամայն հնարաւոր է), ապա թագակիր յուշկապարիկները պէտք է արտայայտէին Զաքարեանների նախնիների թագը, թագաւորութիւնը, այն է՝ Բագրատունիների պետութիւնը:

Այսօրուայ վիճակով սրանից աւելի մանրամասն բացատրութիւն չենք կարող տալ:

ԺԲ-ԺԳ. դդ. հայկական խորհրդանշաններում երեւան եկան նոր երեւոյթներ՝ հաւաքական զինանշանների յօրինուածքների ձեւաւորման նոր սկզբունքներ, սիւժետային յօրինուածքներ: Նոր

³⁷ Որոշ դէպքերում Խորանաշատի Ս. Աստուածածին եկեղեցու ճանկող արծուի քանդակը չփոթում են Վահրամեանների զինանշանի հետ: Տե՛ս Ա. ՇԱՀՆԱ-ԶԱՐԵՍՆ, Վահրամեանների իշխանութիւնը, Երեւան, 1990, էջ 147:

³⁸ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՆԵՍՆ, Հայկական զարդարուեստ, էջ 358-360:

երեւոյթ կարելի է համարել այնպիսի եկեղեցիների կամ նոյնիսկ վանական համալիրների կառուցումը, որոնք իրենցից ներկայացնում էին խորհրդանշանների գանձարաններ: Դրանք են Գեղարդի վանքը. Ն. Վարագավանքի, Մակարավանքի վանքերը, եւ առանձնապէս Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցին: Այս կառոյցը արտակարգ երեւոյթ է, որը լրիւ բացատրելու համար դեռ ժամանակ է պահանջուում: Մենք նրա քանդակները համարում ենք հայկական միջնադարեան խորհրդանշանների դասական օրինակ՝ թէ տոհմական զինանշանների եւ թէ պետական խորհրդանիշը հասկանալու տեսանկիւնից:

Մենագրութեան առաջին մասում մենք որոշել էինք, որ Եղվարդի եկեղեցու երեք ճակատների քանդակները երեք իշխանական տների՝ Դմեղի Մամիկոնեանների, Արշակունիների (կամ նրանց հապատակների շառաւիդներից մէկի) եւ Ազիզբեկեանների զինանշաններն են³⁹:

Մեր մենագրութեան առաջին մասի լոյս տեսնելուց կէս տարի անց գիտական մամուլում հրապարակուել է մի յօդուած, որի հեղինակները նոյնպէս քննում են հայկական միջնադարեան խորհրդանշանները, հիմնականում բերելով Մակարավանքի եւ Եղվարդի եկեղեցու քանդակների օրինակները⁴⁰:

Յօդուածում արուող փաստարկումներն ու եզրակացութիւններն ուղղակի հակադրուում են մեր եզրակացութիւններին եւ սկզբունքային առարկութիւնների տեղիք են տալիս:

Այդ պատճառով մենք պարտաւոր ենք անդրադառնալ յօդուածագիրների արտայայտած տեսակէտներին:

Հեղինակների գտնում են, որ միջնադարեան զարդաքանդակների զգալի մասը ուղղակիօրէն առնչուում են արեւի պաշտամունքի հետ կապուած առասպելների հետ: Այնինչ, նրանց կարծիքով, շատ մասնագէտներ չներթափանցելով զարդաքանդակները կերտող արուեստագէտի նպատակների, քաղաքական տիրող իրավիճակի խորքերը, այդ զարդաքանդակները հիմնականում դիտել են իբրեւ տոհմական զինանշաններ, տոտեմներ, խորհրդանշաններ, կտիտորական պատկերներ, ծնող զոյգեր, որսի սովո-

³⁹ Տե՛ս Հայկական զինանշաններ, մաս I, էջ 64, 68, 69:

⁴⁰ Հ. ՄԱՆԻՉՉԱՐԵԱՆ, Ս. ՍԱՂՈՒՄԵԱՆ, Միջնադարեան գարդաբանութեան խորհրդանշանների հարցի շուրջ, «Բանքեր Երեւանի համալսարանի». 1993, № 3, էջ 49, 50:

րական տեսարաններ, հայկական ինքնատիպ այդ արուեստի արմատները փնտրելով հարեւան երկրներում⁴¹: Այս դիտողութիւնները, չհաշուած վերջինի, վերաբերում են Ա. Մնացականեանի, Բ. Առաքելեանի, Ս. Մնացականեանի տեսակէտներին, որոնք մենք յաճախ մէջբերել ենք մեր աշխատութեան մէջ:

Այդ դիտողութիւնները վերաբերում են նաեւ մեզ, չնայած մեր աշխատութեանը յօդուածագիրները ծանօթ չեն վերը նըշուած պատճառով: Նրանք, փաստորէն, յայտարարում են, որ վերը նշուած ուսումնասիրողները չեն հասկացել հայկական զարդարանդակների գաղափարական իմաստը, հաշուի չառնելով վարպետ-քանդակագործների մտայդացումը, պատմական իրադրութիւնը, սխալմամբ քանդակներին տուել են ոչ իրական բացատրութիւն:

Յօդուածագիրների կարծիքով արեւապաշտութեան աննման առասպել են պարունակում առիւծի եւ ցուլի-մենամարտը պատկերող զարդաքանդակները, որոնք կերտուել են Մակարավանքի գաւթի չքամուտքի վերնամասում (կապում է Միթրա-Միհրի հերոսութիւնների հետ, օր՝ ցուլ սպանելուն): Արեւապաշտութեան մի այլ դրուագ է ներկայացնում այն բարձրաքանդակը, ուր ամառային արեւի խորհրդապատկեր առիւծի փոխարէն հանդէս է գալիս գաղնանային արեւի խորհրդապատկեր արծիւը, իսկ ցուլի փոխարէն՝ խոյը:

Որպէս ապացոյց, յիշատակուած են Անիի Մայր տաճարի հարաւային ճակատի քանդակը, Խորանաշատի, Ցախաց քարի, Գլաձոր (Թանդէ) վանքի, Հերհերի Ս. Սիոն, Գեղարդի, Մակարավանքի, Եղվարդի Ս. Աստուածածին եւ այլ եկեղեցիների քանդակները⁴²:

Բայց հեղինակները ոչ մի ապացոյց չեն բերում, որ Մակարավանքի իրենց նշած քանդակը (ցուլ-առիւծ մենամարտ) իրոք կապում է արեւապաշտութեան կամ Միհրի սխրանքների հետ: Նրանք միայն յայտարարութիւն են անում, չբացատրելով՝ ինչպէս քրիստոնեայ պաշտամունքային կառոյցում կարող էր քանդակուել հեթանոս աստուածութեան կերպարը: Մակարավանքից բերուած միւս օրինակում (նկատի ունեն գլխաւոր եկեղեցու հարաւային ճակատի քանդակը, տե՛ս նկար 45) արեւի

⁴¹ Տե՛ս նոյն, էջ 51, 52:

⁴² Տե՛ս նոյն, էջ 52:

խորհրդապատկեր է համարում արծիւը, որն երբեք այդպիսին չի եղել, ընդ որում այս օրինակում իբր ցուլին փոխարինել է խոյը, բայց խոյը նշուած քանդակում չի կռւում արծուի հետ, իսկ վերջինը ճանկող չէ: Այդ հանգամանքի վրայ հեղինակները ուշադրութիւն չեն դարձրել: Նրանց մատնանշուած ճանկող արծուի քանդակների օրինակները բոլորը Մամիկոնեան-Խաղբակեան տոհմի տարբեր ճիւղերի զինանշաններ են (Հերհերի Ս. Սիոնում՝ Սիւնիքի Օրբելեանների): Առանձնապէս ուշագրաւ է, շարունակում են յօդուածագիրները, Եղվարդի բարձրաքանդակը, ճարտարապետ Շահիկը, կարծես յետագայում ծագելիք կասկածները փարատելու համար, արծուի լայնատարած թեւերի վերնամասում կերտել է զոյգ արեւներ, իսկ հպարտօրէն դուրս ցցուած կրծքին՝ արեւի սկաւառակ հրարձակ: Այստեղ պատկերուած է ոչ միայն գոյամարտը, այլեւ արեւապաշտութեան առասպելի մի դրուագ:

Բնական հարց է ծագում քանի սխալ կարելի է թոյլ տալ մէկ պարբերութեան մէջ: «Զոյգ արեւները» դրանք Դսեղի Մամիկոնեանների զինանշանում արծուաթեւերի օղակներն են, որոնց մասին ասուեց վերը (տե՛ս բաժին Բ, գլ. Բ, ֆ3, նկարներ 43, 43ա): Նրանք զինանշանում լրացուցիչ բաղադրիչների դեր են կատարում են եւ տոհմական նշանների աւանդոյթով կապուած են Զուարթնոցի խոյակների օղակների հետ: Ոչ արծիւը, ոչ նըշուած օղակները արեւի նշան չեն եղել նոյնիսկ հեթանոսական շրջանում:

Տիգրան Բ.ի եւ Արտաւազդ Բ.ի դրամների վրայ առկայ են արեւի նշաններ՝ նրանք ունեն բազմաճիւղ կամ սկաւառակաձեւ արեւի տեսք: Արծուի կրծքի վրայ գծագրուած «արեւի սկաւառակ հրարձակը»՝ դա պարզապէս քանդակի խորհրդանիշ բնոյթը ընդգծող նշանն է, ինչպէս բացատրուեց վերը:

Առաւել զարմանալի է, որ ճանկող արծուաքանդակը հեղինակները դիտում են որպէս գոյամարտ: Ինչ գոյամարտի մասին է խօսքը՝ ճանկերի մէջ սեղմուած, եւ շարժուելու հնարաւորութիւն չունեցող անզօր խոյը մի՞թէ կրուողի տպաւորութիւն է թողնում:

Յօդուածագիրների կարծիքով ճարտարապետ Շահիկը, 1301 թ. կերտելով Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցին, մի նոր ու-

⁴³ Տե՛ս նոյն, էջ 52:

դի հարթեց: Երկինք խոյացող սլացիկ տաճարը կառուցելով վարպետը կարծես կեանքի էր կոչում եւ հպարտութիւն ներշնչում օտարի լծի տակ հեծող, Փիզիկապէս եւ բարոյապէս ընկճուած ազգին: Առանձնապէս հետաքրքրութիւն է ներկայացնում եկեղեցու արեւելեան ճակատի քանդակը՝ վագրը գետին է տապալել եւ նուաճողի կեցուածքով հանդիսաւոր խողխողում է զոհին: Այտեղ խօսքը յայտնի քանդակի մասին է (նկ. 42):

Գ. Յովսէփեանը նրանում տեսնում է պարսկական ազդեցութիւն⁴⁴: Յօդուածագիրները դրան աւելացնում են իրենց մեկնաբանումը՝ տափաստանի բժաւոր գազանը տեղացի չէ, եկել է արեւելքից եւ իրեն բերող նուաճողների պէս նախճիրներ է տանում: Այս ինքնատիպ քանդակում, ըստ հեղինակների, քանդակագործը կերտել է կատաղի եւ ատելի գիշատիչ կենդանու, նկատի ունենալով թաթարական հորդաներին: Խսկ քարայծին կերտելիս՝ նուաճուած եւ ոտնակոխ եղած հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին: Այս իրավիճակը խորապէս զգացող վարպետը զարմանալի լաւատես է, նա հաւատում է, որ կարելի է շտկել իրավիճակը, կանխել ժողովրդի ոչնչացումը եւ երկրի ամայացումը հոգեւոր եւ աշխարհիկ ուժերի վերամիաւորման միջոցով: Այս ըստ հեղինակների տաճարի արեւմտեան ճակատի զարդաքանդակների իմաստը, որ խաչաթեւերին կերտուած են Աստուածածինը մանուկի հետ, իսկ ցածում առիւծի դէմ մարտի է սլանում հզօր ցուլը⁴⁵:

Այս դրուագում շատ պարզորոշ արտայայտուել է հեղինակների անկարողութիւնը բացատրելով ոչ միայն քանդակը, այլեւ յուշարձանը ամբողջութեամբ:

Նախ, պէտք է պարզել, թէ ո՞վ է կերտել եղվարդի եկեղեցին: Ճարտարապետ Շահիկը միայն կատարում էր պատուիրատուի՝ այն աւատապետի պատուէրը, որը յանձնարեկ էր ճարտարապետին, «կերտել» եկեղեցին: Վերջինի բարձրաքանդակները կատարում էին զարդաքանդակների դեր եւ միաժամանակ արտայայտում էին պատուիրատուի (այլ ոչ պատուէրը կատարողի) գաղափարական մտայդացումը: Գաղափար ներշնչողը Ազիզբեկ Ահշխանն էր Ազիզբեկեանների տոհմից, որի նպատակն է եղել կառուցել իշխանական դամբարան (այդ մասին բազմիցս նշուել

⁴⁴ Գ. ՅՈՎՍՔԻՓԵԱՆ, Խայրակեամբ և Պոշեամբ հայոց պատմութեան մէջ, Անթիկաս, 1960, էջ 433.

⁴⁵ Հ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ, Ս. ՍԱՂՈՒՄԵԱՆ, նշ. յօդուածը, էջ 55, 56:

է մասնագիտական գրականութեան մէջ, բայց աչքաթող է արուել վերոյիշեալ յօդուածում): Դամբարանում թաղուած են մեր կարծիքով այն տոհմերի ներկայացուցիչները, որոնց զինանշանները քանդակուած են եկեղեցու ճակատներին: Շատ հաւանական է, որ նման բազմաներկայացուցչական դամբարան կառուցելու պատուէրը իշխան Ազիզբեկը ստացած լինէր բարձրաստիճան գերադասից, պետութեան ներկայացուցչից, որովհետեւ տարբեր տոհմերի անդամների համար ընդհանուր դամբարան կարող էր կառուցել նրանց ընդհանուր գերադասը (օր. Զաքարեան աւագանուց որեւէ մէկը): Այսպիսով, եկեղեցու քանդակների իմաստաւորողը ոչ թէ Շահիկն էր, այլ աւատապետը, առաջինը կարող էր այս կամ այն աստիճանի պլոփեսիոնալ վարպետութեամբ իրագործել պատուիրուած մտայլացումը: Ուրեմն ինչպէս արեւելեան, այնպէս էլ միւս ճակատների քանդակների իմաստը պէտք է որոնել ոչ թէ ճարտարապետի արուեստագիտական-շինարարական վարպետութեան մէջ, այլ այն իրողութեան, որը գրդել էր աւատապետին յանձնարարել վարպետին ստեղծելու կառոյց (տուեալ դէմքում եկեղեցի) եւ նրանում գեղարուեստական միջոցներով արտայայտել նպատակը, գաղափարը, որին ծառայում է կառոյցը (տուեալ դէմքում խմբակային դամբարանը): Փորձելով բացատրել այդ շարժառիթը, մենք կարծիք ենք յայտնել, որ իշխանական տարբեր տների ներկայացուցիչները (Մամիկոնեաններ, Ազիզբեկեաններ եւ այլ) կարեւոր ծառայութիւն են կատարել հայրենիքին եւ այդ պատճառով արժանացել յատուկ ուշադրութեան պետութեան (Զաքարեանների աւագանու) կողմից⁴⁶:

Ինչ վերաբերում է քանդակին՝ գիշատիչ գազան եւ յօշոտուող կենդանի, ապա յօդուածագիրների վերը բերուած մեկնաբանութիւնը միանգամայն սխալ է:

Նախ՝ գիշատիչը բծաւոր է, ուստի վագր լինել չի կարող, վերջինի մարմինը շերտաւոր գունաւորում ունի: Բծաւոր են կատուառիւծը կամ յովազը, ինձը, լուսանը: Մենք այդ գիշատիչին համարել ենք յովազ, իսկ վերջինը ինչպէս նաեւ լուսանը եւ միւս բծաւոր գիշատիչ կատուառեսակները տարածուած են եղել Հայաստանում եւ այս տեսանկիւնից քանդակի գիշատիչի ընկալումը որպէս օտար նուաճողի խորհրդանիշ բոլորովին համոզիչ չէ:

⁴⁶ Տե՛ս Հայկական զինանշաններ, մաս I, էջ 77:

Ինչպէս համոզիչ չէ այսպէս կոչուած քարայծի (իրականում եղնիկի, իսկ քարայծը քանդակուած է հիւսիսային ճակատին որպէս Ազիզբեկեանների նշան (իմաստաւորումը որպէս տեղաբնիկների, որոնք հեծում են օտարի լծի տակ: Սա պարզապէս արհեստական կառուցած մտապատկերի արդիւնք է: Ոչ մի երկրի աւատապետ (կամ՝ թէկուզ ճարտարապետ), այդ թւում եւ հայ, չի պատկերի իր հայրենիքի խորհրդանիշ կերպարը յօշոտուող անգօր զոհի ձեւով: Որպէսզի հիմնաւորուի նման անտրամաբանական իմաստաւորումը, յօդուածագիրները վկայակոչում են եկեղեցու միւս քանդակը՝ Մարիամ Աստուածամօր պատկերը եւ ցուլառիւծ մարտի տեսարանը: Սա նոյնպէս արհեստական կապակցութիւն է, Մարիամի պատկերով բարձրաքանդակը (իսաչ, որի հորիզոնական թեւերի վրայ տեղադրուած են Մարիամի եւ Ցովհաննէս Մկրտչի պատկերները (նկ. 42ա) կապուած է եկեղեցու երկրորդ յարկի բոլոր քանդակապատկերների հետ, նրանք բոլորը միասին նպատակադրուած են մի ընդհանուր գաղափարին՝ փառաբանել հայրենիքի նուիրեալ աւատապետներին, որոնց յիշատակը յաւերժացնելու համար կառուցուել է դամբարանը: Իսկ Ցովհաննէս Մկրտիչը տեղ է գտել քանդակաշարում որպէս հայ ժողովրդի երկնային հովանաւոր (այդպէս է նաեւ Աղթամարի տաճարում):

Յօդուածագիրները գրում են, որ միջնադարեան զարդաքանդակների շատերում տեղ են գտել պատմական իրադարձութիւնների արտացոլման թեման եւ արժանայիշատակ գործիչների պատկերաքանդակները⁴⁷: Այս հարցում նրանք միանգամայն իրաւացի են, բայց տարօրինակ ձեւով հէնց իրենք աշքաթող են արել եղվարդի եկեղեցու կառուցման պարագաները, շարժառիթը: Նրանք հաշուի չեն առել նրա դամբարանային բնոյթը, որը եւ կանխորոշել է բարձրաքանդակների թեմատիկ ընտրութիւնը:

Քրիստոնէութեան ընդունումից յետոյ արեւի պաշտամունքը փոխարինուել է խաչի պաշտամունքով, իսկ թռչունը (արծիւը) եւ առիւծը հայկական լեռնաշխարհում հնագոյն ժամանակներից մինչեւ միջնադար օգտագործուել են որպէս տոհմերի խորհրդանիշ եւ պետական զինանշան: Եւ յօդուածագիրների քննադատական դիտողութիւնը այն գիտնականների հասցէին, որոնք քանդակները դիտել են որպէս տոհմական զինանշան, ծնող զոյդ եւ այլ, բոլորովին տեղին չէ: Կ'ասէինք հակառակը՝ քանդակները

⁴⁷ Հ. ՄԱՆՈՒՋԱՐԵԱՆ, Ա. ՍԱՂՈՒՄԵԱՆ, նշ. յօդուածը, էջ 54:

իմաստաւորելիս յօդուածագիրները իրենք կորցնում են կապը քանդակի, յուշարձանի եւ դարաշղանի կրօնական պատկերացումների միջեւ, չնայած կշտամբում են դրանում ուրիշներին: Դրա բնորոշ օրինակն է Աղցի Արշակունեաց դամբարանի Հայկ-Օրիոն քանդակի նրանց մեկնաբանումը: Քանդակում պատկերուած է մերկ նիզակաւոր մարդ, որը կռուում է վարազի դէմ: Յօդուածագիրների կարծիքով դա սպարապետ Վասակ Մամիկոնեանն է, որին գերելուց յնտոյ մորթազերծ էր արել պարսից Շապուհ արքան⁴⁸:

Իրականում քանդակում պատկերուած է Հայերի նահապետ Հայկը, որը կռուելով բռնակալ Բելի դէմ, սպանել էր նրան: Հայկը միաժամանակ տոտեմ էր՝ տոտեմ-նահապետը, որը դառնում է կոսմիկական տոտեմ եւ բարձրանալով երկինք դառնում լուսաւոր համաստեղութիւններից մէկը: Ստանալով կոսմոդոնիկ ձեւակերպում՝ Հայկը աստուածացուել է եւ նոյնացուել Օրիոն համաստեղութեան հետ⁴⁹: Իսկ աստուածները հին աշխարհի մարդկանց պատերազմամբ մերկ էին, այդ պատճառով էլ դամբարանի քանդակում Հայկի պատկերը մերկ է: Աշխարհիկ մարդուն, սպարապետին երբեք մերկ վիճակով չէին պատկերի, այս հանգամանքը բացառում է քանդակուած անձի նոյնացումը Վասակ Մամիկոնեանի հետ:

Հայկ-Օրիոնի թեման Հայ ազնուականութեան խորհրդապատկերներում տարածուած էր դեռեւս հելենիստական շրջանում, եւ կրկնուել է Աղցի դամբարանում⁵⁰: Հայկ նահապետի կերպարը, որպէս չար ուժերի (նուաճողների) դէմ կռուող դիւցազնի պաշտուում էր Հայաստանում մ. թ. Դ. դ. շատ աւելի շուտ եւ յարդուած էր թէ հեթանոսական եւ թէ քրիստոնէական շրջաններում: Այդ պատճառով էլ Աղցի նշուած քանդակի կապակցումը մ. թ. Դ. դ. որեւէ իրադարձութեան հետ զուրկ է պատմական հիմքից:

Խորհրդանշանները անխզելի են երկրի Հասարակական-քաղաքական զարգացումից: Լինելով հասարակութեան մէջ գործող քաղաքական համակարգի, նրանում գործող օրինաչափութիւննե-

⁴⁸ Հ. ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ, Ս. ՍԱՂՈՒՄԵԱՆ, նշ. յօդուածը, էջ 55:

⁴⁹ ՏԵ՛Ս Բ. ԱՐԱՔԵԼԵԱՆ, Հայկական պատկերաբանդակը Դ-է դդ., էջ 23, 88, 89:

⁵⁰ Այդ մասին տե՛ս սոյն յօդուածի Ա բաժնում (տե՛ս Բազմավէլ 2003, էջ 172 եւ նկ. 16ա):

րի, յարաբերութիւնների առարկայական-խորհրդանիշ արտայաց տութիւնը, նրանք շատ արագ եւ համապատասխան ձեւով արձագանքում են ներքաղաքական-պետական կեանքի բոլոր էական փոփոխութիւններին եւ տեղաշարժերին:

Պատկերանշաններում (էմբլեմաններում) եւ զինանշաններում զինանշանը ամրագրում է տեղի ունեցած բոլոր նշանակալից փոփոխութիւնները, որոնք կատարւում են քաղաքական համակարգում, պետական կարգավիճակում, պետութեան կառուցուածքում: Նա ներպետական եւ միապետական կեանքում կայացող տեղաշարժերի պատկերազրդ ցուցատախտակ է:

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Armenian Coats-of-Arms The Ardashesyans, The Arshagounis, Developed Feudalism

RAPHAEL MATEVOSSIAN

(summary)

The study of coats-of-arms is considered an important issue in historical research, because the science of coats-of-arms is, first and foremost, an auxiliary branch of history. The result of a historical study into coats-of-arms was our work "Armenian Coats-of-Arms" (Part I), published in 1994, which dealt with the definition of the coats-of-arms of three noble Armenian clans - the Bagratounis, Zakarians and Mamikonians - as well as Armenian national emblems in the 8th-13th centuries.

This article studies the coats-of-arms of only those clans that were present in the royal cemetery of the Arshakunyats in Aghts, and in the sculptures related to it in the 3rd century basilica of Kasakh.

The issue being studied is of historical order (partially even historically legal), acting, in some cases as the main source of information, and, in others, as an appendix to different sources. Coats-of-arms and other government concepts provide a subjective and creative reflection on standards of intra-political relations in feudal society, the administrative and political structure of the government, the official policies of the government and other related issues. That is why it is essential to know the rules and laws that society lived and developed by in order to correctly understand the coats-of-arms of any historical period.

The first part of this monograph studies the coat-of-arms of the Ardashesyans. The second part is dedicated to the coats-of-arms of the period of developed feudalism, in which the study of the coats-of-arms of the above-mentioned three clans continues.

Previous (1994) and current works do not exhaust the study of the rich heritage of Armenian coats-of-arms. The symbols and emblems of many Armenian clans still await researchers, including those of Vaspourakan, Syunik, Artsakh and the coats-of-arms of other areas.